ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի 2023 թվականի սոցիալ-տնտեսական իրավիճակի և մարզպետի տարեկան գործունեության մասին (ըստ ոլորտների)

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ, ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. **Քաղաքաշինություն**

Ներդրումային ծրագրեր՝

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի պատվիրատվությամբ և Ասիական բանկի կողմից տրամադրված վարկային միջոցներով «Սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրով» կառուցվում է Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի նոր շենքը: Պայմանագրային գումարը կազմում է 1.228 մլն դրամ: 2023 թվականին իրականացվել են 20.0 մլն դրամի շինարարական աշխատանքներ: Աշխատանքները ավարտված են:

- Առողջապահական ծրագրերի իրականացման գրասենյակ-պետական հիմնարկի պատվիրատվությամբ համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Հիվանդությունների կանխարգելում և վերահսկում» վարկային 5222-ԱՄ ծրագրի շրջանակներում Եղեգնաձոր համայնքում կառուցվում է հիվանդանոցի նոր շենք, որի պայմանագրային գումարը կազմում է 2032.0 մլն դրամ: 2023 թվականին կատարվել է 852.0 մլն դրամի շինարարական աշխատանքներ:
- «ՋԻԷյՋԷմ-ԱՐՄԵՆԻԱ» զարգացման հիմնադրամի կողմից իրականացվում է Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրում մանկապարտեզի կառուցման աշխատանքներ: Ընդ. գումարը՝ 577.160 մլն դրամ: 2023 թվականին իրականացվել են 468.8 մլն դրամի շինարարական աշխատանքներ:
- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ԾԻԳ-ի կողմից կառուցվում է մարզում մոդուլային 3 նոր դպրոցներ՝

1. Եղեգիս բնակավայրի միջնակարգ դպրոցի նոր շենքի կառուցում: Նախահաշվային արժեքը կազմում է 706.0 մլն դրամ: 2023 թվականին կատարվել է 176,2 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

2. Չիվա բնակավայրի նոր դպրոցի կառուցման նախահաշվային արժեքը կազմում է 713.1 մլն դրամ: 2023 թվականին կատարվել է 226.15 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

3. Գոմք բնակավայրի նոր դպրոցի կառուցման նախահաշվային արժեքը կազմում է 652.7 մլն դրամ +լրացուցիչ՝ մարզահրապարակի հենապատ 35,34 մլն դրամ, ընդհամենը 688,04 մլն դրամ: 2023 թվականին կատարվել է 262.1 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվիրատվությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ԾԻԳ-ի կողմից վերակառուցվում է Շատինի միջնակարգ դպրոցի մարզադահլիճը և հանդիսությունների սրահը: Նախահաշվային արժեքը կազմում է 209.98 մլն դրամ: 2023 թվականին կատարվել է 125.7 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

Մասնավոր ներդրումներ՝

- Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրում «Թավիթիան Վինյարդ» ՍՊԸ-ի կողմից կառուցվում է հյուրանոցային համալիր: Նախահաշվային արժեքը կազմում է 1001.5 մլն դրամ: 2023 թվականին կատարվել է 630.00 մլն դրամի շինարարական աշխատանքներ:

Ընդամենը մարզում՝ 2760,95 մլն դրամ

2. Ջրամատակարարման, ջրահեռացման և կոմունալ տնտեսության բնագավառ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի կողմից սպասարկվում է թվով 7 ջրամատակարարման համակարգեր: Ընկերության բաժանորդների թիվը 9584 է, որից 773-ը իրավաբանական կազմակերպություններ: 2022 թվականի համեմատ բաժանորդների թիվը 2023 թվականին ավելացել է 84 բաժանորդով, որից 6-ը իրավաբանական կազմակերպություններ:

Մարզի մյուս բնակավայրերի ջրամատակարարման համակարգերը շահագործվում են համայնքապետարանների կողմից:

3. **Գազիֆիկացում**

Վայոց ձորի մարզի 5 համայնքների 44 բնակավայրերից գազիֆիկացված է 17 բնակավայր: Այս բնագավառում առաջնահերթությունը մնում է չգազիֆիկացված բնակավայրերի գազիֆիկացումը: Միաժամանակ աշխատանքներ են տարվում ազգաբնակչության հետ այլընտրանքային էներգետիկ համակարգերից օգտվելու համար: Մարզում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի բաժանորդների թիվը 9237 է, որից 4439-ը

բազմաբնակարան շենքերի բնակարաններն են, 4480 անհատական տներ և 318 իրավաբանական կազմակերպություններ: Տեղադրվել են 38 անվտանգության ազդանշանային սարքեր:

Հաշվետու տարում բնական գազի շահագործման ընթացքում արտակարգ դեպքեր չեն արձանագրվել:

4. Ճարտարապետություն

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում վարչության կողմից ուսումնասիրվել և լիազոր մարմին է ուղարկվել քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման գոտիներում նախագծման թույլտվություն պահանջող համայնքի ղեկավարների կողմից ներկայացված 12 քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթներ: Ուսումնասիրման փուլում կասեցվել և լրամշակման է ուղղարկվել 4 փաթեթ:

ՀՀ ՏԿԵՆ տեղեկատվություն ներկայացնելու համար պարբերաբար կատարվում է ուսումնասիրություն ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների վրա, հատկապես խոշոր քաղաքների կենտրոնական հատվածներում գույքագրված կիսակառույց, անավարտ շինարարական օբյեկտներում: Աշխատանքները ընթացքի մեջ են:

Կատարվել է բնակավայրերում 7 հատ հողի նպատակային նշանակության փոփոխության աշխատանքներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություններ:

Վարչությունը նշված ժամկետում համայնքներից ստացել է 8 հատ հողամասի գործառնական նշանակության փոփոխության առաջարկներ, որոնք ուսումնասիրվել, քննարկվել և տրվել է դրական եզրակացություն:

Մ-2 միջպետական մայրուղուն հարակից տարածքներում ՀՀ կադաստրի կոմիտեում հաշվառված ինքնակամ կառույցների օրինականացման համար համայնքներից ստացված քաղաքաշինական փաստաթղթերի փաթեթները ստուգվել և ՀՀ քաղաքաշինության կոմիտե է ներկայացվել համաձայնության :

ՀՀ ՏԿԵՆ հանձնարարականի համաձայն աշխատանքներ է տարվում համայնքների հետ համայնքային գույքի գրանցման բնագավառում: Աշխատանքները ընթացքի մեջ են:

Աշխատանքներ է տարվել համայնքներում գույքերի կադաստրային հասցեների ուղղման հետ կապված և ներկայացվել է տեղեկատվություն ՀՀ ՏԿԵՆ և ՀՀ կադաստրի կոմիտե:

Քննարկվել և տրվել է կարծիք ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացրած օրենքների և որոշման նախագծերի վերաբերյալ:

Հաշվետու ժամանակահատվածում վարչությունը ստացել է համայնքներից 198 շինթույլտվություններ, որոնք հաշվառել և ներկայացվել է հաշվետվություն ՀՀ ՏԿՆ՝ ամսական կտրվածքով:

5. Ճանապարհաշինություն

2023 թվականի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզի տրանսպորտի և ճանապարհաշինության բնագավառում կատարված աշխատանքների վերաբերյալ

2023 թվականին ՀՀ Վայոց ձորի մարզի տարածքով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման և վերանորոգման նպատակով ՀՀ պետական բյուջեի միջոցներով նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները

1. Մ-2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 131.5 – կմ 139.0 /7.5 կմ/ հատվածի հիմնանորոգում - 1 963.0 մլն. Դրամ

Կմ 131.5 – կմ 134.6 /3.1 կմ/ հատվածի վրա իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի, կողնակների, ջրահեռացման խողովակների տեղադրման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման, գծանշման, ճանապարհային նշանների տեղադրման և հողային աշխատանքներ – 800 մլն.դրամ:

Աշխատանքներն ավարտվել են:

2. Մ-2 – Երևան – Երասխ – Գորիս – Մեղրի – Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ142.0 – կմ 150.7 /8.7 կմ/ հատվածի հիմնանորոգում - 2 241.5 մլն. դրամ

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի, կողնակների, ջրահեռացման խողովակների, մետաղական արգելափակոցների տեղադրման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման, գծանշման, ճանապարհային նշանների տեղադրման և հողային աշխատանքներ

Աշխատանքների ավարտը՝ 2023թ դեկտեմբեր

3. /Մ-2/ (Արենի)- Խաչիկ – Գնիշիկ - Եղեգնաձոր կմ 58.0 – կմ70.0 /12 կմ/ հատվածի հիմնանորոգում - 1 558.0 մլն. դրամ

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի, կողնակների, եզրաքարերի և մետաղական արգելափակոցների տեղադրման, մայթերի կառուցման,

կամուրջների նորոգման, ասֆալտապատման, գծանշման, ճանապարհային նշանների տեղադրման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների կատարման ժամկետը՝ հունիս - դեկտեմբեր 2023թ

4. / Մ-2/ - Հերհեր – Կարմրաշեն ավտոճանապարհի / 8.7 կմ/ հատվածի հիմնանորոգում - 814.0 մլն. դրամ:

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի, կողնակների, եզրաքարերի տեղադրման, մայթերի կառուցման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների կատարման ժամկետը՝ 2022թ մայիս - 2023թ սեպտեմբեր

5. Մ10 Սևան – Մարտունի - Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ 123+500 հատվածում վերգետնյա հետիոտնային անցման կառուցում - 54.5 մլն. դրամ

Իրականացվել են հողային, ճաղավանդակների, երկաթբետոնյա հիմքերի և հենարանների կառուցման, մետաղական թռիչքային հեծանի տեղադրման, սալիկապատման, ծածկերի կառուցման աշխատանքներ:

Աշխատանքների ավարտը՝ 2023թ դեկտեմբեր

ՀՀ տարածքային զարգացման հիմնադրամով իրականացվում են հետևյալ աշխատանքները

1. Ջերմուկ բնակավայրի Ձախափնյակ թաղամասի Մաշտոցի և Ազատամարտիկների փողոցների վերանորոգում և բարեկարգում – 732.4 մլն. դրամ

Իրականացվել են բազալտե հին եզրաքարերի քանդման, բետոնե եզրաքարերի և բազալտե նոր եզրաքարերի տեղադրման,ասֆալտապատման, աշխատանքներ - 416 մլն. դրամ:

Աշխատանքների ավարտը՝ 2023թ.

2. Ջերմուկ բնակավայրի Շահումյան, Վարդանյան, Մյասնիկյան, Ադամյան և Չարենցի փողոցների վերանորոգում, և վերականգնում - 741,5 մլն. դրամ

Իրականացվել են երթևեկելի մասի նախապատրաստական շերտի և կողնակների եզրաքարերի տեղադրման, մայթերի կառուցման, կամուրջների նորոգման, ասֆալտապատման և հողային աշխատանքներ:

Աշխատանքների ավարտը՝ 2023թ դեկտեմբեր

Տարբեր ծրագրերով նախատեսված աշխատանքներ

Ընդամենը՝ 6 625.5 մլն. դրամ

1. **Հողաշինություն**

Հաշվետու ժամանակաշրջանում կազմվել է մարզի հողային հաշվեկշիռը, ըստ որի մարզի վարչական տարածքը կազմում է 231013.0 հա, որից գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 189530,1հա, այդ թվում վարելահող՝ 15860.4հա, բազմամյա տնկարքներ՝ 2378.1հա (պտուղ-1188.7հա,խաղող-1189.4հա), խոտհարքներ՝ 5043.9հա, արոտ՝ 92200.8հա, այլ հողատեսքեր՝ 74046.9հա: Մարզում ոռոգվող հողերը կազմում են ընդամենը 7225.9 հա կամ 3.81% :

Համաձայն ՀՀ կառավարության 17.09.2009թ. թիվ 1066-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ բաժնի հետևողական աշխատանքների արդյունքում կատարվել են համայնքային և քաղաքացիների սեփականություն հանդիսացող 85.29հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի փոփոխություններ՝ ցածրարժեքից - բարձրարժեքի՝ Արենի համայնքում 57.67հա (արոտը և այլ հողատեսքը), Եղեգնաձոր համայնքում 19.05հա, Վայք համայնքում 2.15հա, Ջերմուկ համայնքում 4.2հա փոխադրվել և անցել են բազմամյա տնկարքների տակ, Եղեգիսի համայնքում 2.2 հա արոտը փոխադրվել է խոտհարքի՝ հետագայում պտղատու այգի հիմնելու նպատակով:

Որոշման կարգի համաձայն կատարվել է նաև բարձրարժեքից – ցածրարժեք հողատեսքերի փոփոխություններ՝ Արենի համայնքից՝ Ելփինի բնակավայրի քաղաքացիների սեփականություն հանդիսացող 1.25հա ջրովի վարելահողերը, Աղավնաձոր և Չիվա բնակավայրի քաղաքացիների սեփականություն հանդիսացող 1.1հա պտղատու այգիները, Արենի բնակավայրից համայնքային սեփականություն հանդիսացող 1.8հա խաղողի այգին և Աղավնաձորի բնակավայրից իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 0.41հա վարելահողը փոխադրվել են ցածրարժեք հողատեսքերի՝ անջրդի ու ջրովի վարելահողերի և խոտհարքների, Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի իրավաբանական անձի սեփականություն հանդիսացող 0.4հա վարելահողը փոխադրվել է խոտհարքի, իսկ Եղեգնաձոր համայնքի 0.118հա քաղաքացիների և 1.1973հա իրավաբանական անձանձ սեփականություն հանդիսացող վարելահողերը փոխադրվել է խոտհարքերի: Նշված փոփոխությունները կարծածվեն մարզի 2024 թվականի ամփոփ հողային հաշվեկշռում: Գործընթացը շարունակվում է:

Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի համաձայնեցմանն է ներկայացվել, համայնքների վարչական սահմաններում գտնվող հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներում, հողերի նպատակային նշանակության փոփոխության 36 առաջարկություն, որից 18-ին հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն, որն էլ սահմանված կարգով փոխանցել ենք համայնքներ, իսկ 18-ը ընթացքի մեջ են:

ՀՀ հողային օրենսգրքի 42-րդ հոդվածի համաձայն, մարզպետի կարգադրությամբ տեսչական ստուգում ենք իրականացրել մարզի Եղեգնաձոր համայնքում, հայտնաբերված թերությունների վերացման համար՝ արոտների օգտագործման տրադրումը կատարել իրավական ակտերի պահանջներին համապատասխան, որի վերաբերյալ հստակ ժամկետ է տրվել:

ՈՒսումնասիրվել և օրինակություններն են ստուգվել հողային հարաբերությունների բնագավառում համայնքների կողմից ընդունված համայնքի ղեկավարի և ավագանու որոշումները:

Համաձայն ՀՀ կառավարության 14.01.2010 թվականի թիվ 16-Ն որոշմամբ հաստատված կարգի ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների

նախարարություն համաձայնեցման է ներկայացվել Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող 2,12862հա պտղատու այգու օտարման առաջարկությունը, որի վերաբերյալ նախարարությունը տվել է իր դրական եզրակացությունը, իսկ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,44799հա հողամասի օտարման առաջարկությունը ընթացքի մեջ է:

Ուսումնասիրվել և օրինականություններն են ստուգվել հողային հարաբերությունների բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ղեկավարի և ավագանու) կողմից ընդունված որոշումները:

Հետևողականանություն է հանդես բերվել, որպեսզի համայնքների կողմից հողերի օտարման և վարձակալության տրամադրման աշխատանքներն իրականացվեն ՀՀ հողային օրենսգրքի պահանջներին համապատասխան:

Համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից առ՝ 1-ը հունվարի 2024թ. օտարվել է 58,45հա, որի ընդհանուր գումարը կազմել է 74.925 միլ. դրամ, վարձակալական հիմունքներով օգտագործման է տրամադրվել 39232.5հա, որի վարձավճարը կազմել է 49.567 միլ. դրամ:

Բաժինը դիմումներ է ստացել 16 քաղաքացիներից, բոլոր դիմումներին օրենքով սահմանված կարգով ընթացք է տվել:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտ

Մարզում գործում են 8 բժշկական հաստատություններ, որոնցից 3-ը մատուցում են ամբուլատոր և հիվանդանոցային ծառայություններ, իսկ մնացած 5-ը՝ առողջության առաջնային պահպանման կենտրոններ են և մատուցում են միայն ամբուլատոր ծառայություններ: Բուժհաստատություններում աշխատում են 387 մարդ, որից 82 բժիշկ, 192 բուժքույր:

2023 թվականի ընթացքում իրականացվել է 129918.5 հազ. դրամի վճարովի ծառայություններ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում եղել է 114141.2 հազ.դրամ՝ ավելացել է 15777.3 հազ. դրամով:

2023 թ. ընթացքում բժշկական կազմակերպություններում հաշվառվել են 223 ծնունդ, 2022թ.-ի նույն ժամանակահատվածում հաշվառվել են 241 ծնունդ՝ նվազել է 18-ով:

2023թ.-ի ընթացքում ընթացքում պետական պատվերով բուժման և հետազոտման համար մարզին հատկացված 45 տեղից ուղեգրող հանձնաժողովների կողմից հանրապետության բուժհաստատություններ պետական պատվերով բուժման և հետազոտման են ուղեգրվել 35 քաղաքացի:

Առողջարանային վերականգնողական բուժման են ուղեգրվել 23 երեխա իրենց խնամակալների հետ:

Համաձայն ՀՀ Կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման 2023 թվականին ավարտվել է<<Վայոց ձորի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության շինարարական աշխատանքները: Կազմակերպությունն արդեն գրանցվել է ՀՀ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում, տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել Խորեն Նազարյանը, հաստատվել է հիվանդանոցին հասանելիք գույքի ցանկը: «Վայոց ձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շինարարության համար ներդրվել է ընդամենը 2,67 մլրդ. դրամ.

- ՀՀ Կառավարության կողմից ներդրվել է 1,17 մլրդ. դրամ, որից 447 մլն. դրամը օգտագործվել է բժշկական սարքավորումներ ձեռք բերելու համար:
- Համաշխարհային բանկի կողմից ներդրվել է 1,5 մլրդ. դրամ:
- Մատուցվելիք բժշկական ծառայություններ՝ Վիրաբուժական, թերապևտիկ, մանկաբուժական, ինֆեկցիոն, մանկաբարձ-գինեկոլոգիական, վերակենդանացման, հեմոդիալիզ, ընդունարանին կից անհետաձգելի օգնության կայան, շտապ բժշկական օգնություն, արտահիվանդանոցային ծառայություն, լաբորատոր ախտորոշիչ ծառայություններ, ճառագայթային ախտորոշիչ ծառայություններ:
- Մահճակալների թիվը կազմում է 36 և 5 մահճակալ վերակենդանացման բաժանմունքում:
- Աշխատողների թիվ՝ 90-115 աշխատակից:
- Ծրագրի պատվիրատու՝ ՀՀ ԱՆ «Առողջապահական Ծրագրերի Իրականացման Գրասենյակ» պետական հիմնարկ:
- Շինարարական կապալառու՝ <<ԲԻԴԵՔ>> շինարարական ընկերություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն: Տնօրեն՝ Գառնիկ Ավետիսյան:

Եղեգնաձորի ԲԿ-ում իրականացվել է.

1. Ուիգմոր ԲԿ-ի բժիշկների թիմի կողմից երեխաների հետազոտություն, որոնք կարիք ունեն մանկական վիրաբույժի, ռևմատոլոգի, մանկական էնդոկրինոլոգի, մանկական օրթոպեդի և մանկական նյարդաբանի խորհրդատվության:
2. CosmoLab Clinics-ի մաշկաբանների խմբի այց Վայոց ձորի մարզ, մասնավորապես մատուցվել են մաշկաբանական անվճար խորհրդատվություն և բուժում, Խալերի և այլ նորագոյացությունների գործիքային ախտորոշում, Նորագոյացությունների հեռացում:

<<Վայքի բուժական միավորում>> ՓԲԸ-ում <<Բեգլարյան>> բժշկական կենտրոնի կողմից <<Բաց դռների օրվա>> շրջանակներում կատարվել են գինեկոլոգիական հիվանդությունների խորհրդատվություն և հետազոտություն՝ 16 շահառու:

Նպատակային ուսուցման համար կատարվել են 6 ուղեգրում ՀՀ ԵՊԲՀ, որից ընդունվել են 3-ը:

Առողջապահության Ազգային Ինստիտուտի և միջազգայնի կազմակերպությունների հետ համատեղ կազմակերպվել են բազմաթիվ վեբինարներ, հեռուստակոնֆերանսներ, սեմինարներ,դասընթացներ ավագ և միջին բուժաշխատողների, նեղ մասնագետների համար՝ ինչպես Covid-19-ի ախտորոշման, բուժման, վարման, կանխարգելման հետ կապված,այնպես էլ նեղ մասնագիտական թեմաներով: Կազմակերպվել է հանդիպում ՀՀ ԱՆ-ի տեղակալի, ԱԱԻ-ի տնօրենի հետ՝ իրազեկելու հավաստագրման և հավաստագրման գործընթացի կազմակերպմանը ներկայացվող պահանջների մասին:
2023թ. հունվարից մարզի բժշկական կազմակերպությունների բոլոր բուժաշխատողները հավաստագրվել են:
Մարզային ենթակայության բժշկական կազմակերպությունների բուժաշխատողներն ապահովվել են իրենց շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտները:
04.05.2023թ. ՀՀ առողջապահության նախարարության նախաձեռնությամբ իրականացվել է <<Առողջ ապրելակերպի>> իրազեկման հանրապետական արշավ վայոցձորյան միջոցառում, որին մասնակցել են մարզի շուրջ 500 դպրոցականներ:Միջոցառման ընթացքում քաղաքացիների մոտ իրականացվել են սկրինինգային բժշկական հետազոտություններ՝ շաքարային դիաբետ, արյան գերճնշման չափում, քաշի չափում և այլն:
2023 թվականին Եղեգնաձորի ԲԿ-ում բացվել է համակարգչային տոմոգրաֆիայի բաժանմունքը, որի համար ներդրվել է 27.9 մլն. դրամ:

«Դու մենակ չես» ՀԿ-ի միջոցով՝ «Արևային առողջություն. հզորացնելով հիվանդանոցները կայուն ապագայի համար» ծրագրի շրջանակում ձեռք են բերվել և Եղեգնաձորի բժշկական կենտրոնում տեղադրվել են բազմաֆունկցիոնալ էլեկտրական ջեռուցման երկու կաթսաներ, որի համար ներդրվել է 3 մլն. դրամ:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի (ԿԽՄԿ) կողմից վերանորոգվել է Ջերմուկի առողջության կենտրոնի շտապ օգնության ծառայության բաժանմունքը, կահավորվել՝ <Վիվա. Բժիշկները և Կամավորները՝ Հայաստանին> հիմնադրամի հովանավորությամբ, որի համար ներդրվել է 13,8 մլն. դրամ:

ՀՀ կառավարության որոշմամբ Ջերմուկում առաջիկայում կառուցվելու է նոր հիվանդանոց:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպանության ենթադրամաշնորհային «Բուժանձնակազմի վերապատրաստում, բժշկական պարագաների, սարքավորումների և գույքի տրամադրում բուժկետին» ծրագրի շրջանակում, «Սյունիք-Զարգացում» ՀԿ-ի հետ համագործակցությամբ, սահմանապահ Խնձորուտ բնակավայրի բուժկետը վերազինվել է գույքով, անհրաժեշտ բժշկական բոլոր սարքավորումներով և պարագաներով:
Եղեգնաձորի ԲԿ-ում գործող “Հայկական ակնաբուժության նախագիծ” բարեգործական հիմնադրամի (ՀԱՆ ԲՀ) հիմնած Վահագն Ագլամիշյանի անվ. մարզային ակնաբուժական կենտրոնում 2023 թվականին իրականացվել է 166 վիրահատություն:
Կատարվել է մարզի 6 մանկապարտեզների երեխաների տեսողության սկրինինգ:

Կորոնավիրուսի (Covid-19) դեմ պատվաստումների, ինչպես նաև պլանային պատվաստումների գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար բժշկական կազմակերպությունների հետ իրականացվել է առցանց և առկա խորհրդակցություններ, խորհրդատվություններ,սեմինարներ : Կատարվել են այցեր բժշկական կազմակերպություններ, Ջերմուկ քաղաքի առողջարաններ:

Իրականացվում են գրիպի դեմ, ԿԿԽ, ԱԿԴՓ-Մ, ՄՊՊ և այլ պատվաստումներ՝ համաձայն պատվաստումային օրացույցի:

Պատվաստումներում ընդգրկվածության ցուցանիշների վերլուծությունը ցույց է տալիս, որ Վայոց ձորի մարզում 2023 թվականի հունվար-դեկտեմբեր 2022 թվականի նույն ժամանակահատվածի համեմատությամբ, 1 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունն աճել է 2%-ով և կազմել է 97,3 %, առավել ցածր ցուցանիշ է արձանագրվել «Ջերմուկի ԱԿ» ՓԲԸ-ում՝ 90,9%: 2 տարեկանների ամբողջական ընդգրկվածությունն աճել է 1,3%-ով՝ կազմելով 97,4%, իսկ 6 տարեկանների ընդգրկվածությունը նվազել է 1,1%-ով՝ կազմելով 98,7%:

Կայացել է <<Վայոց ձորի մարզում առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների, մանկական վնասվածքների հիվանդացության, մահացության և կանխարգելման միջոցառումների մասին>> 2023 թվականի ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի Եղեգնաձորի մասնաճյուղի հետ համատեղ նիստ:

Կայացել է <<Վայոց ձորի մարզի վիրուսային, մասնավորապես՝ արտաընդերային ճանապարհով փոխանցվող հեպատիտների կանխարգելման>> հանձնաժողովի նիստը:

ՀՀ ԱՆ ներկայացվել է պարզ ընթացակարգով պետական պատվերի տեղադրման հայտերը,որոնք լրիվ բավարարվել են:

Կազմվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց և նրանց ընտանիքի անդամների փոխօգնության 1 խումբ՝ 6 անձից բաղկացած: Հանդիպման ընթացքում խմբի անդամները կիսվել են իրենց առօրյա կենցաղի և խնդիրները հաղթահարելուն ուղղված իրենց գործողությունների մասին:

Կազմակերպվել է կենտրոնացված և մարդասիրական ճանապարհներով ստացվող դեղորայքի ստացում և կատարվել է բաշխումներ մարզի բուժհիմնարկներին, հաշվետվությունները ներկայացվել են ՀՀ ԱՆ:

Պարբերաբար կատարվել են այցեր հանրակրթական ուսումնական հաստատություններ հակահամաճարակային կանոնների պահպանման ուսումնասիրման նպատակով:

Աշխատել ենք ենթակա և վերադաս կազմակերպությունների, ՀՎԿԱԿ-ի մարզային մասնաճյուղի հետ :

Ուսումնասիրվել են քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները, բարձրացված խնդիրներին տրվել են լուծումներ:

Սոցիալական ոլորտի հարցերի բնագավառ

Տեղահանված ընտանիքների սոցիալական ապահովություն- 2023 թվականի սեպտեմբերին ադրբեջանական ագրեսիայի պատճառով Լեռնային Ղարաբաղի բռնի տեղահանված բնակչությանը ընդունել է Վայք քաղաքում շուրջօրյա ռեժիմով գործող հաշվառման կայանը: Տեղահանված ընտանինքերին տրամադրվել է սնունդ, դեղորայք, անհրաժեշտ անկողնային, հիգիենիկ և այլ պարագաներ, որից հետո ուղղորդվել են իրենց համար հատկացված բնակության վայրեր: Վայոց ձորի մարզում 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվառվել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված շուրջ 425 ընտանիք՝ 1548 անձ/թվերը փոփոխական են/:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի նախաձեռնությամբ ձևավորվել են աշխատանքային խմբեր և մարզի բնակավայրերում հանդիպումներ են կազմակերպվել Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության հետ: Ներկայացրվել են պետական աջակցության առողջապահական, կրթական, ֆինանսական, աշխատանքի տեղավորման ծրագրերը: Արձանագրվել են ԼՂ քաղաքացիների կողմից բարձրացված հարցերը և աշխատանքներ են տարվել դրանց լուծման ուղղությամբ :

Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական ապահովություն. 2020 թվականի Արցախյան 44-օրյա պատերազմի, 2022 թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ագրեսիայի, մարտական հերթապահության ժամանակ զոհված, անհայտ կորած, հաշմանդամություն ձեռք բերած զինծառայողների ընտանիքների սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ ամենօրյա աշխատանք է տարվել: Օրենքով սահմանված հատուցումները ընտանիքները ստանում են:

Հաշամանդամություն ունեցող անձինք և տարեցներ.

Հայկական Կարմիր Խաչի ընկերությունը պետական դրամաշնորհով ՀՀ Վայոց ձորի մարզում տնային պայմաններում խնամքի ծառայություններ է մատուցում կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 65 տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց՝ անհատական սոցիալական կարիքներին համապատասխան: Շահառուներին տրամադրվել է սոցիալ-հոգեբանական, բժշկական օգնության, կենցաղային սպասարկման կազմակերպման և խնամքի իրականացման, իրավունքերի պաշտպանությանն ուղղված ծառայություններ:

Տարեցները գտնվում են մարզային և համայնքային իշխանությունների ուշադրության կենտրոնում: 2023 թվականի հոկտեմբերի 1-ին՝ տարեցների միջազգային օրվա կապակցությամբ, մարզի 4 հարյուրամյա տարեցներին շնորհավորել և նվերներ են հանձնել ՀՀ Վայոց ձորի մարզպետը և համայնքների ղեկավարները:

Պետական զ**բաղվածության ծրագրերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ են** տարվել և վերջնական արդյունքում իրականացվել է Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման 369 ծրագիր:

Մարզի բնակչության սոցիալական վիճակը պարբերաբար ուսումնասիրվում է, կատարվում են տնային այցելություններ, սոցիալական լարվածությունը մեղմելու համար կարիքավոր ընտանիքներին օգնություն է տրամադրվում: ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից 526 սոցիալապես անապահով քաղաքացիների դրամական օգնություն է տրամադրվել:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտ

Աշխատանք կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքների հետ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ է իրականացվել արցախյան պատերազմում զոհված ՝ 11, անհայտ կորած, վիրավորում ստացած և պայմանագրային

զինծառայողների՝ 7, Արցախի պատերազմից տուժած, տեղահանված՝ 15, բազմազավակ և բազմանդամ՝ 25, այդ թվում սոցիալապես անապահով՝ շուրջ 100, հաշմանդամություն ունեցող՝ շուրջ 26, խնամակալության (հոգաբարձության) տակ գտնվող երեխաներ ունեցող՝ 35, ծնողի կողմից երեխաների վրա բացասական ազդեցություն ունեցող՝ 2, քրեակատարողական հիմնարկներում պատիժը կրող դատապարտյալների՝ 10, ՀՀ ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչության ԱԳ և ԸԲԿԽ խմբերում պրոֆիլակտիկ քարտային հաշվառման վերցված իրավախախտ և հանցագործություն կատարած, կրթությունից խուսափող և հակահասարակական վարք դրսևորող անչափահասների՝ շուրջ 15, բռնության ենթարկված, ընտանեկան տարաձայնություններ ունեցող՝ շուրջ 30, միջանձնային հարաբերությունների կարգավորման և այլ բնույթի խնդիրներ ունեցող՝ շուրջ 10, ինչպես նաև 2023թ.-ի սեպտեմբերի 25-ից հետո Արցախից բռնի տեղահանված ընտանիքների հետ, ուսումնասիրվել է նրանց կարիքները, խնդիրների լուծման ուղղությամբ ցուցաբերվել աջակցություն:

Մասնավորապես կատարվել է.

- Մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ համատեղ տնային այցելություններ, հանդիպումներ մարզպետարանում, կարիքների գնահատում, վերլուծություն և քննարկում,
- Մարզպետի աշխատակազմին տրամադրված կարիքի գնահատման զեկուցագրերի հիման վրա ընտանիքներին ֆինանսական աջակցության տրամադրում,
    - Ուղղորդում համապատասխան բուժական և վերականգնողական կառույցներ («Մանկական զարգացման հիմնադրամ»-ի աջակցության կենտրոններ, «Ոսկեփորիկ» զարգացման կենտրոն, «Դու մենակ չես» ՀԿ աջակցման կենտրոն),
    - Ուղղորդում միջգերատեսչական սոցիալական համագործակցության շրջանակներում գործող կառույցներ՝ ներընտանեկան խնդիրների կարգավորման նպատակով,
    - Տնային այցելություններ հաշվառման մեջ գտնվող անձանց ընտանիքներ, իրականացվել բացատրական, սոցիալ-հոգեբանական աշխատանքներ՝ կրկնակի իրավախախտումների և բռնության դեպքերի կանխարգելման, ընտանեկան տարաձայնությունների լուծման, ընտանիքում հաշտության վերականգնման ուղղությամբ: Արդյունքում կրկնահանցագործություններ չեն գրանցվել:
    - 2023թ.-ի սեպտեմբերի 25-ից հետո Արցախից բռնի տեղահանված ընտանիքների ընդունելության և գրանցման աշխատանքներ,
    - Այցելություններ Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայր, Արենի համայնքի Ագարակաձոր բնակավայր, Եղեգիս համայնքի «Սիրանույշ» ճամբար, Վայք և Ջերմուկ համայնքների հյուրանոցային և առողջարանային համալիրներ՝ Արցախից բռնի տեղահանված քաղաքացիներին պետական աջակցության ծրագրերին ծանոթացնելու, նրանց՝ առաջնահերթ լուծման

կարիք ունեցող խնդիրների վերհանման և համապատասխան կառույցներ ուղղորդման նպատակով:

Միջգերատեսչական սոցիալական համագործակցություն՝ անդամակցություն հանձնաժողովներին, խորհուրդներին, մասնագիտական խմբերին

Ապահովվել է մասնակցություն.

- Երեխաների իրավունքների պաշտպանության ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ազգային հանձնաժողովի 2 նիստի՝ 1) զեկույց-պրեզենտացիայի ներկայացում՝ ԸԿԵԻՊ բաժնի՝ 2022 թվականի ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ, 2) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Ազգային հանձնաժողովին կից ստեղծված Օպերատիվ շտաբում մարզում երեխաների նկատմամբ բռնության կիրառման դեպքերի մասին համատեղ քննարկման :
- Քաղաքացիների ընդունելության կազմակերպման նպատակով ստեղծված հանձնաժողովի 8 նիստի: Արդյունքում քննարկվել է դրամական օգնության համար դիմած քաղաքացիների դիմումները,
- ՄՄԾ Ջերմուկի տարածքային մակարդակում ձևավորված համակարգող խորհրդի 3 նիստի: Արդյունքում լուծում են ստացել Ջերմուկ համայնքի՝ տարածքային կենտրոն դիմած քաղաքացիների սոցիալական խնդիրները,
- Կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների և խնամատար ծնող դառնալ ցանկացող անձի տվյալների համադրում իրականացնելու նպատակով ստեղծված բազմամասնագիտական խմբի 1 նիստի: Արդյունքում իրականացվել է խնամատարության ենթակա երեխայի և խնամատար ծնողի տվյալների համադրում,
- ՀՀ Վայոց ձորի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի» 2 նիստի: Արդյունքում իրականացվել է խոցելի խմբերի առողջության պահպանման իրավունքի պաշտպանությանն ուղղված ծրագրերի և միջոցառումների քննարկում և պարզաբանում,
- ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում ստեղծված «Գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող հանձնաժողովի» 1 նիստի: Արդյունքում քննարկվել է ՀՀ կառավարության՝ 2019 թվականի սեպտեմբերի 19-ի N 1334-Լ որոշմամբ հաստատված ռազմավարական ծրագրի շրջանակներում 2022թ.-ի ընթացքում իրականացված և 2023թ.-ին նախատեսվող միջոցառումների ցանկը,
- Եղեգնաձոր, Արենի, Եղեգիս և Ջերմուկ համայնքերի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների 6 նիստի: Եղեգիս համայնքի ԽՀՀ 2 նիստին միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերի հետ քննարկվել է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մոր և նրա անչափահաս երեխաների հետագա խնամքի կազմակերպման հարցը: Արդյունքում երեխաները տեղավորվել են Կապանի շուրջօրյա խնամքի ճգնաժամային կենտրոնում, իսկ մայրը՝ Գյումրիի կանանց աջակցման

համապատասխան հաստատությունում: Քննարկվել է նաև որպես երեխաների խնամակալ դիմած քաղաքացու դիմումը, սակայն բավարար հիմքերի բացակայության պատճառով մերժվել է: Եղեգնաձոր համայնքում ԽՀՀ նիստին քննարկվել են երեխայի նկատմամբ ծնողի կողմից գործադրած բռնության դեպքերի կանխման ուղղությամբ համայնքում տարվող աշխատանքները, քննարկվել է կրթությունից խուսափող երեխայի՝ հանրակրթություն վերադարձնելու հնարավոր ուղիները: Արդյունքում երեխան ուղղորդվել է Արմավիրի մարզառազմական վարժարան, սակայն բավարար գիտելիքներ չունենալու պատճառով չի ընդունվել հաստատություն: Տարվում են շարունակական աշխատանքներ ընտանիքի հետ: Ջերմուկ համայնքի ԽՀՀ նիստին քննարվել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքի, առողջական խնդիրներ ունեցող մոր և անչափահաս երեխաների հարցը: Արդյունքում երեխաներն ուղղորդվել են Մանկական զարգացման հիմնադրամի «Զարման» կենտրոն: Արենի համայնքի ԽՀՀ նիստին քննարկվել են չափահաս քաղաքացու նկատմամբ պատրոնաժ սահմանելու և անչափահասին պատկանող անշարժ գույքի օտարման հարցերը:

- Կատարվել է այցելություն «Ոսկեփորիկ» զարգացման կենտրոն՝ կենտրոնի աշխատանքին ծանոթանալու և հետագա համագործակցությունը խորացնելու նպատակով: Արդյունքում իրականացվել է մարզի՝ առողջական խնդիրներ ունեցող երեխաների ուղղորդում կենտրոն (այդ թվում՝ Արցախից տեղահանված 2 երեխայի),
- Տարվել է աշխատանք Մանկական զարգացման հիմնադրամի, խնամքի հաստատությունում գտնվող երեխաներին կենսաբանական ընտանիք վերադարձնելու ուղղությամբ՝ հաստատությունների բեռնաթափման ծրագրի շրջանակում: Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվեց, որ երեխաների վերադարձը նպատակահարմար չէ՝ ընտանիքների բավարար կենսապայմանների բացակայության պատճառով:
- Սերտորեն համագործակցություն է իրականցվել «Դու մենակ չես» հասարակական կազմակերպության հետ: Արդյունքում բռնության ենթարկված անձինք ուղղորդվել են կենտրոն, ստացել համապատասխան մասնագիտական աջակցություն: «Դու մենակ չես» ՀԿ-ի նախաձեռնությամբ և Եղեգնաձորի ԱԳ և ԸԲԿ խմբերի հետ համատեղ «Ինչ է ընտանեկան բռնությունը և դրա հետևանքները» ծրագրի շրջանակում մարզի դպրոցներում իրականցվել են սեմինար-դասընթացներ՝ բռնությունների կանխարգելման և դպրոցահասակ երեխաների շրջանում իրավախախտության դեպքերի նվազեցման նպատակով: Արդյունքում վեր են հանվել դպրոցահասակների շրջանում առկա և իրենցից վտանգ ներկայացնող խնդիրները:
- Արփի, Գնիշիկ և Հերմոն բնակավայրերի կրթությունից խուսափող 6 անչափահասների հանրակրթություն վերադարձնելու նպատակով մարզպետի աշխատակազմի մասնագետների, ոստիկանության, հասարակական կառույցի ներկայացուցիչների, մանկավարժական կոլեկտիվների և ծնողական համայնքների հետ իրականացվել են ծավալուն համատեղ աշխատանքներ: Արդյունքում երեխաներից 3-ը վերադարձվել են հանրակրթության, 1-ը ուղղորդվել է Կապանի շուրջօրյա խնամքի հաստատություն, 1-ը ուղղորդվել է Արմավիրի մարզառազմական վարժարան, 1 երեխայի

ուսումնական պրոցեսը ընդհատվել է բնակավայրի դպրոցի փակման և այլ դպրոցից բնակավայրի հեռավորության պատճառով:

- Իրականացվել է Հայաստան մուտք գործող հումանիտար բեռների՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ստեղծված գրանցման համակարգի վարման, դեպի մարզ բեռների առաքման և ըստ համայնքների բաշխման աշխատանքներ:
- Կատարվել է աշխատանք Գեղարքունիքի մարզում երեխայի նկատմամբ ծնողի կողմից իրականացված բռնության դեպքի քննարկման և մեր մարզում նմանատիպ դեպքերի կանխման ուղղությամբ՝ համայնքների ԽՀՀ-ների և դպրոցների տնօրենների հետ,
- Վայք և Եղեգնաձոր համայնքների՝ ոլորտի մասով իրավական մասնագիտական հսկողության աշխատանքներին: Արդյունքում վեր են հանվել ոլորտի խնդիրները, ցուցաբերվել է մեթոդական աշխատանք,
- Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի կառավարման խորհուրդի 4 նիստի: Արդյունքում քննարկվել է դպրոցի բյուջեն, զարգացման ծրագիրը, ընթացիկ հարցեր,
- Իրականացվել են աշխատանքներ «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հետ՝ վերջինիս հասցեով ստացված բեռները հումանիտար համարելու ուղղությամբ: «Սատար» հաշմանդամների հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռի ներմուծման մասին» Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի որոշման երկու նախագծերի կրկնակի քննարկումների արդյունքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը արձանագրեց դրական կարծիք, որը և ներկայացվեց բարեգործական ծրագրերի համակարգման խորհրդակցական հանձնաժողովին:
- Համագործակցում ենք նաև «Ռուսական գրքի տուն» հասարակական կազմակերպության հետ: Արդյունքում իրականացվում են համակարգման աշխատանքներ մարզպետի աշխատակազմի Առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչությունում պրակտիկա անցնող ուսանողի հետ:

Հաշվառումներ

- Կատարվել է Ջերմուկ համայնքի առանց ծնողական խնամքի մնացած 3 երեխայի տարածքային հաշվառում, մուտքագրում «Նորք» տեղեկատվական համակարգ, փաստաթղթերի ներկայացում ՀՀ ԱՍՀ նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման համար,
- Կատարվել է որդեգրողի թեկնածու հաշվառվելու ցանկություն հայտնած մարզի Արենի և Վայք համայնքներից երկու ընտանիքների (4անձ) հաշվառման աշխատանքներ՝ կենսապայմանների ուսումնասիրություն, տարածքային հաշվառում, մուտքագրում <<Նորք>> տեղեկատվական համակարգ կենտրոնացված հաշվառման համար փաստաթղթերի փաթեթների ներկայացում ԱՍՀ նախարարություն,
- Խնամատար ծնող դառնալ ցանկացող 2 անձի հաշվառում, փաստաթղթային փաթեթի պատրաստում և մուտքագրում «Նորք» տեղեկատվական համակարգ,

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 14 երեխայի վկայագրում,
- Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող 152 երեխայի վերաբերյալ տվյալների ներմուծում «Նորք» տեղեկատվական համակարգ:

Շարունակական աշխատանք

- Որդեգրողի թեկնածուների հետ՝ «Նորք» տեղեկատվական համակարգի «Մանուկ» ենթահամակարգում որդեգրման ենթակա երեխաների տվյալների դիտում՝ քաղաքացիների դիմումի հիման վրա,
- Խնամատար ծնող դառնալ ցանկացող և հաշվառված քաղաքացիների հետ՝ խնամատարության գործընթացի ուղղությամբ,
  - Վայոց ձորի մարզի տարածքում խնամատարության ինստիտուտի կայացման ուղղությամբ,
  - Տվյալների ներմուծում «Նորք» տեղեկատվական համակարգ, «Մանուկ» ԵՀ-ի բազայի թարմացման ուղղությամբ Վայքի և Ջերմուկի տարածքային մանկավարժաբժշկական կենտրոնների մասնագետների աշխատանքների համակարգում,
  - Վայոց ձորի մարզից՝ հանրապետության խնամքի շուրջօրյա հաստատություններ ուղղորդված, մարզի ներառական կրթություն ստացող, խնամակալության տակ գտնվող, ինչպես նաև երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքների, միջազգային կազմակերպությունների և ՀԿ-ների վարաբերյալ շտեմարանների թարմացում:

Հաշվետվություններ և տեղեկատվություններ

- Հաշվետվություն 2022 և 2023 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ոլորտի ուղղությամբ իրականացրած աշխատանքների վերաբերյալ,
- Տեղեկատվություն ՀՀ ԱՍՀ նախարարությանը՝ 2022 թվականի դրությամբ խնամակալ և խնամատար ընտանիքներում խնամք ստացող երեխաների վերաբերյալ,
- Տեղեկատվություն ՀՀ ԱՍՀ նախարարությանը՝ 2009-2022թթ.. ընթացքում հանրապետության խնամքի հաստատություններ ուղղորդված և խնամակալությունում /հոգաբարձությունում գրանցված երեխաների վերաբերյալ,
- Հաշվետվություն Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կայքի համար՝ 2023 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության ոլորտի ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ,
- Ամենամսյա տեղեկատվություն ՀՀ ԱՍՀ նախարարությանը՝ ՄԱԿ ԿՀՆ-16 ցուցիչի վերաբերյալ (մարզում օրինական ներկայացուցիչների կողմից բռնության ենթարկված երեխաների առկայության մասին),

- Տեղեկատվություն ՀՀ ՏԿԵ նախարարությանը՝ ԱՄՆ պետդեպարտամենտի հարցաշարի շրջանակում հավասար իրավունքներին, կանանց, երեխաներին, ընտանեկան բռնությանն առնչվող հարցաշարի վերաբերյալ,
- Տեղեկատվություն ՀՀ ՏԿԵ նախարարությանը՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող 2020-2022թթ. գործողությունների ծրագրի կատարման արդյունքների վերաբերյալ,
- Տեղեկատվություն ՀՀ ԱՍՀ նախարարությանը՝ մարզում ապրող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների վերաբերյալ,
- Հաշվետվություն 2022 թվականի առաջին կիսամյակում ոլորտի մասով կատարարած աշխատանքների վերաբերյալ՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին,
- Տեղեկատվություն Եղեգնաձորի դատախազին՝ 2022 թվականին ԸԿԵԻՊ բաժնի կատարած աշխատանքների վերաբերյալ,
- Ոլորտին վերաբերող իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և քննարկում, առաջարկությունների ներկայացում,
- Համագործակցություն ԳԼՈԲ-ԱՈՒԴԻՏ ՍՊԸ-ի հետ՝ 2022թ.-ի և 2023թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում ԸԿԵԻՊ բաժնի հաշվետվության ներկայացում,
- Տեղեկատվություն բուլինգի վերաբերյալ՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից կազմված հարցաշարի ուղղությամբ,
- Տեղեկատվության տրամադրում ՏԿԵ նախարարությանը՝ ԱՄՆ պետքարտուղարության մարդու իրավունքների և կրոնական ազատությունների մասին 2023թ. զեկույցների պատրաստման համար՝ հավասար իրավունքներին, կանանց, երեխաներին, ընտանեկան բռնությանն առնչվող հարցաշարի շուրջ,
- 2023թ.-ի հուլիսի 14-ին ԸԿԵԻՊ բաժնի՝ 2022-ի կատարած աշխատանքների հաշվետվության ներկայացում ՀՀ ԱՍՀ նախարարության Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին,
- Կատարված աշխատանքների մասին զեկուցագրերի ներկայացում:

Վերապատրաստումներ և դասընթացներ, պանելային քննարկումներ, միջոցառումներ և ծրագրեր

- Վայքի համայնքապետարանում թրաֆիքինգի կանխարգելմանը նվիրված սեմինար-դասընթաց: Ապահովվել է երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների և հիմնախնդիրներով զբաղվող շահագրգիռ անձանց մասնակցությունը դասընթացին,
- «Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ «Կանայք հանուն խաղաղության. Կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգի աջակցություն ՀՀ-ում» վերապատրաստումների ծրագրի շրջանակներում իրականացված երկօրյա վերապատրաստման դասընթաց: Ապահովվել է մարզպետի աշխատակազմի ներկայացուցիչների, մարզի համայնքների սոցիալական աշխատողների և դպրոցների հոգեբանների մասնակցությունը վերապատրաստմանը « Լուսիտուր» հյուրանոցում,

- «Կանայք հանուն խաղաղության. Կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգի աջակցություն ՀՀ-ում» ծրագրի շրջանակներում պանելային հանդիպումներ Երևան քաղաքում,
- Վերապատրաստման եռօրյա դասընթաց Երևան քաղաքում՝ «Կառավարում արտակարգ իրավիճակներում» թեմայով,
- Առցանց վերապատրաստում «Էլեկտրոնային կառավարում և փաստաթղթաշրջանառություն» թեմայով,
- Առցանց վերապատրաստում «Խոսքի մշակույթ, պաշտոնական փաստաթղթերի լեզուն թեմայով»,
- Առցանց վերապատրաստում «ՀՀ օրենքը քաղաքացիական ծառայության մասին և դրանի բխող ենթաօրենսդրական ակտերը» թեմայով,
- Առցանց վերապատրաստում «Ֆինանսների և ռեսուրսների կառավարում» թեմայով,
- Առցանց վերապատրաստում «Բարեվարքություն» թեմայով,
- Երկշաբաթյա առցանց վերապատրաստում ՏԿ մարմինների աշխատակիցների համար՝ «Իրավական մասնագիտական վերահսկողություն» թեմայով,
- « Առողջ ապրելակերպի արշավ Վայոց ձորում» ծրագիր,
- Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառում,
- «Հզոր կին. ավելի լավ ապագայի բանալին» խորագրիրը կրող միջոցառում,
- Ջերմուկի ՄՄԾ-ի նախաձեռնությամբ կազմակերպված սոցիալական աշխատողի օրվան նվիրված միջոցառում,
- «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի նախաձեռնությամբ Վայք քաղաքում կազմակերպված սոցիալ-հոգեբանական աջակցության դասընթաց,
- «ՎԻՆՆԵԹ Հայաստան» կանանց ռեսուրս կենտրոնների ցանցի կողմից կազմակերպված «ՀԱՎԱՍԱՐ ԵՄ-ն հանուն կանանց իրավազորման Հայաստանում» ծրագրի շրջանակներում կազմակերպված կլոր սեղան-քննարկում:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակաշրջանում համագործակցված աշխատանքներ են տարվել տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կառավարման համակարգի մարմինների հետ:

Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել մարզի համայնքների **2023** թվականի տարեկան աշխատանքային պլանների հաստատման ուղղությամբ. մարզի **5** համայնքներում սահմանված ժամկետներում հաստատվել են **2023** թվականի Տարեկան

Աշխատանքային պլանները, որոնք բխել են համայնքների զարգացման ծրագրերի **2023** թվականի համար նախատեսված միջոցառումներից:

Տարվել են աշխատանքներ <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների կատարման նպատակով ավագանու նիստերի հրավիրման ժամկետների պահպանման, ընդունված որոշումները օրենքով սահմանված ժամկետում մարզպետի աշխատակազմ ներկայացնելու, որոշումները օրենսդրությանը համապատասխանեցնելու, ընդունված իրավական ակտերի և բյուջեների հրապարակայնության ապահովման ուղղությամբ:

Համակարգվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և ընթացիկ օրենսդրությանը հակասող մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումները մարզպետի պահանջով վերանայելու գործընթացը:

Համակարգվել է համայնքային բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից ավագանուն տրված եռամսյակային հաղորդումների և տարեկան հաշվետվությունների տրման աշխատանքները:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնության ապահովման ուղղությամբ: Այդ նպատակով համայնքների պաշտոնական կայքերում և ֆեյսբուքյան էջերում պարբերաբար տեղակայվել են տեղեկություններ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերաբերյալ:

Հետևողական աշխատանքներ են տարվել համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման ուղղությամբ: Համայնքների ղեկավարների և ավագանու անդամների կողմից կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություն և հանդիպում համայնքի բնակչության հետ:

Համայնքներում իրականացված միջոցառումների վերաբերյալ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել ամսական, եռամսյակային և կիսամյակային հաշվետվություններ: Մասնավորապես՝

1.Ամսական հաշվետվությունների մասով.

1.1. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 10.02.2017 թվականի թիվ 01/15/685-17 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել

տեղեկատվություն մարզի ավտոմոբիլային ճանապարհներին հարող տարածքներում կուտակված աղբի մաքրման աշխատանքների վերաբերյալ,

1.2. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 04.03.2022 թվականի թիվ ԳՍ/15.4/5385 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի համայնքներում համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարված մրցույթների և համայնքային ծառայողների ատեստավորումների արդյունքների վերաբերյալ,

1.3. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 12.04.2022 թվականի թիվ ԳՍ//9017-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն խոշորացված համայնքներում տեղական ինքնակառավարման մարմինների և աշխատակազմերի գործունեության կազմակերպման ընթացքում լիազոր մարմնի կողմից տրամադրված ուղեցույցի դրույթների կիրառման նկատմամբ սահմանված հսկողության արդյունքների վերաբերյալ,

1.4. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 02.02.2023 թվականի թիվ ԳՍ/20.1/3143-2023 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների ղեկավարների, համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների և համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:

2.Եռամսյակային հաշվետվությունների մասով.

2.1. Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 24.05.2010 թվականի թիվ 01/16/3030-10 հանձնարարականի և ի կատարումն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության միջոցառումների ծրագրի 72.6 կետի 3-րդ ենթակետի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն համայնքների ղեկավարների և ավագանու կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ,

2.2. Ի կատարումն ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարարի 11.08.2010 թվականի թիվ 01/16/4439-09 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն մարզի համայնքների բյուջեների, բյուջեների եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, բյուջեներում կատարվող փոփոխությունների, համայնքների ավագանիների դերակատարության ու պատասխանատվության բարձրացման վերաբերյալ,

2.3. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.04.2022 թվականի թիվ ԳՍ//8856-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն խոշորացված համայնքներում էլեկտրոնային եղանակով իրականացվող գործառույթների և տրամադրվող ծառայությունների վերաբերյալ:

2.4. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 11.04.2022 թվականի թիվ ԳՍ//8856-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի խոշորացված համայնքների վերաբերյալ:

2.5. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 17.01.2022 թվականի թիվ ԳՍ//900-2022 հանձնարարականի պահանջների ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքների համացանցային կայքերի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ:

2.6. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 12.04.2022 թվականի թիվ ԳՍ//9017-2022 հանձնարարականի պահանջների՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն ՀՀ Վայոց ձորի մարզի միավորված համայնքներում ստացված տեխնիկայի և կատարված աշխատանքների վերաբերյալ:

3.Կիսամյակային հաշվետվությունների մասով.

3.1. Ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականի պահանջների՝ ՀՀ Վայոց ձորի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և

կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողության արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի **30.11.2022** թվականի թիվ **3245-Ա** հրամանով հաստատված աշխատանքային ծրագրի և ՀՀ Վայոց ձորի մարզպետի **24.05.2023** թվականի թիվ **101-Ա**, **02.08.2023** թվականի թիվ **152-Ա** որոշումների պահանջների՝ համապատասխանաբար, **2023** թվականի **հունիսի 1-ից 14-ը** և **օգոստոսի 7-ից 18-ը**, իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Վայոց ձորի մարզի **Եղեգնաձոր** և **Վայք** համայնքներում:

Իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ կազմվել են արձանագրություններ:

Հսկողության ժամանակ արձանագրվել են թերություններ և բացթողումներ **<<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Առևտրի և ծառայությունների մասին>>, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>>, <<Աղբահանության և սանիտարական մաքրման մասին>>, <<Քաղաքացիական պաշտպանության մասին>>, <<Բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքների** պահանջների կատարման ուղղությամբ:

Թերությունների և բացթողումների վերաբերյալ սահմանված կարգով կազմվել են արձանագրություններ՝ քննարկվել և սահմանվել են թերությունների վերացման ժամկետները:

Կազմված արձանագրությունները և հայտնաբերված խախտումները սահմանված ժամկետներում ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և տեղադրվել են մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում:

2023 թվականի ընթացքում համակարգվել է համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնների մրցույթների հայտարարման գործընթացը:

Մարզի համայնքներում **2023** թվականի ընթացքում համայնքային ծառայության **27** թափուր պաշտոնների համար հայտարարվել են մրցույթներ (**27** մրցույթներից **4**-ը եղել են կրկնակի մրցույթներ), որոնց արդյունքում համալրվել են **13** պաշտոններ (թվով **14** մրցույթներ չեն կայացել):

Հաշվետու ժամանակահատվածում համայնքային ծառայողների ատեստավորում չի իրականացվել:

2023 թվականին համայնքային ծառայողների և տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման ծրագրերի շրջանակներում վերապատրաստվել են **համայնքապետարանների աշխատակազմերի** թվով **20 համայնքային ծառայողներ** և **19 ավագանու անդամներ**:

ՀՀ Վայոց ձորի մարզի համայնքապետարանների աշխատակազմերում **2023** թվականի դեկտեմբերի **31**-ի դրությամբ համայնքային ծառայության պաշտոնների թիվը **145** է:

Կազմակերպվել են մարզպետի այցելություններ մարզի համայնքներ: Համակարգվել են այցելությունների ընթացքում բարձրացված խնդիրների կարգավորման աշխատանքները:

Համագործակցելով մարզի համայնքապետարանների աշխատակազմերի հետ՝ գույքագրվել են համայնքներում առկա հիմնախնդիրները: Համայնքների և մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրվել են դրանց լուծման նախնական հնարավոր գնահատականները: Գույքագրված և գնահատված հիմնախնդիրները մարզպետի աշխատակազմում քննարկվել են համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

2023 թվականի սեպտեմբերի **24**-ից սկսած, պատշաճ համագործակցություն է ապահովվել մարզի համայնքների և պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ՝ Լեռնային Ղարաբաղից տեղահանված քաղաքացիներին առնչվող հարցերի համակարգման ուղղությամբ:

Մասնավորապես՝

1.Առանձնակի հետևողական աշխատանքներ են տարվել Վայք համայնքի Վայքի քաղաքային բնակավայրի մշակույթի տանը ԼՂ-ից տեղահանված քաղաքացիների ընդունման հավաքակայանի ծավալման ուղղությամբ,

2.Համակարգվել են հավաքակայանի աշխատանքներում մարզի համայնքապետարանների աշխատակազմերի ներկայացուցիչների պատշաճ ներգրավման աշխատանքները (ԼՂ քաղաքացիների տվյալների մուտքագրման մասնագետների ապահովում, շուրջօրյա հերթապահության ապահովում և այլն),

3.Ապահովվել է մարզի համայնքապետարանների աշխատակազմերի սոցիալական աշխատողների ըստ առնչության ներգրավվածությունը թե՛ հավաքակայանի, թե՛ համայնքներում ԼՂ քաղաքացիների տեղակայման գործընթացներում,

4.Սեպտեմբերի **24**-ից սկսած, յուրաքանչյուր օր՝ օրը երեք անգամ, ՀՀ տարածքային կառավարման նախարարություն և պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումներին ներկայացվել է տեղեկատվություն մարզի համայնքների բնակավայրերում տեղակայված ԼՂ քաղաքացիների թվի վերաբերյալ (ԼՂ քաղաքացիների թվի հաշվեգրման աշխատանքները շարունակվում են),

5.Մարզի համայնքների բնակավայրերում տեղակայված ԼՂ քաղաքացիների շրջանում՝ համայնքապետարանների հետ ակտիվ համագործակցությամբ, իրականացվել են իրազեկման աշխատանքներ պետական աջակցության ծրագրերից օգտվելու վերաբերյալ,

6.Ըստ անհրաժեշտության ձեռնարկվել են այլ միջոցառումներ:

2023 թվականի ընթացքում աշխատանքային պլաններին համաձայն և ըստ անհրաժեշտության առողջ համագործակցություն է ապահովվել պետական կառավարման համակարգի մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ:

Վարչության գործառույթներից բխող աշխատանքները պատշաճ որակով և ժամանակին կատարելու նպատակով վարչությունը Mulberry համակարգով իրականացրել է աշխատանքներ թվով **3522** հանձնարարականների և գրությունների պահանջների կատարման ուղղությամբ, միաժամանակ՝ իրականացվել են նաև Mulberry համակարգով չհաշվեգրված տեղեկությունների հավաքագրման, մշակման և վերլուծության աշխատանքեր:

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համակարգում և աջակցում է մարզային ենթակայությամբ 45 հանրակրթական ուսումնական հաստատությունների և 3 մարզային մշակութային ՊՈԱԿ-ների գործունեությունը: Աջակցում է նախարարության ենթակայությամբ 3 պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների և համայնքային ենթակայությամբ գործող նախադպրոցական, մշակութային և մարզական հաստատությունների օրենսդրության պահանջներին համապատասխան գործունեություն ծավալելու գործընթացին:

Ոլորտի պետական քաղաքականությունը մարզում իրականացնելու նպատակով՝ վարչությունը համագործակցում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, նրա առանձնացված կառույցների հետ, ինչպիսիք են՝ կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն (ԿՏԱԿ), գնահատման և թեստավորման կենտրոն (ԳԹԿ), կրթության զարգացման և

նորարարությունների ազգային կենտրոն (ԿԶՆԱԿ), դասագրքերի և տեղեկատվական համակարգերի շրջանառու հիմնադրամ (ԴՏՀՇՀ), կրթության տեսչական մարմին, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն (ՏՄԱԿ):

ՀՀ Վայոց ձորի մարզում գործում են 1 տարածաշրջանային պետական քոլեջ, 1 կրթահամալիր, 2 ավագ, 31 միջնակարգ և 14 հիմնական դպրոցներ:

Մարզի բոլոր դպրոցները 2021-2022 ուումնական տարվանից անցել են համընդհանուր ներառական կրթության:

Մարզում գործում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների համակարգման, դպրոցավարությանն անհրաժեշտ փաստաթղթերին և գործառույթներին ծանոթացման, դասալսումների իրականացման, անհրաժեշտ մեթոդական և խորհրդատվական աջակցության տրամադրման նպատակով՝ ուսումնական տարվա ընթացքում այցելություններ են կատարվել մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ:

Կրթական գործընթացի որակը էականորեն կախված է ուսուցչական անձնակազմի դասավանդման մեթոդիկայից և գիտելիքների մակարդակից: Այս առումով կարևորվել է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը և ատեստավորումը: Իրականացվել են տնօրենների, տնօրենի տեղակալների և ուսուցիչների վերապատրաստման աշխատանքները:

ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից Հանրակրթական պետական չափորոշչի ներդրման արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվել են հանդիպում-քննարկումներ, սեմինարներ:

ՀՀ Վայոց ձորի մարզի դպրոցներում իրականացվում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը: Ծրագրի արդյունավետ իրականացման համար խոհարարների համար կազմակերպվել են տեսական և գործնական դասընթացներ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն են ունեցել դպրոցականների առարկայական օլիմպիադաները: Արվում է առավելագույնը օլիմպիադայի մասսայականությունը, օբյեկտիվությունը և որակը բարձրացնելու ուղղությամբ:

ՀՀ Վայոց ձորի մարզի ուսումնական հաստատություններից <<Մաթեմատիկա>>,<<Ֆիզիկա>>,<<Աստղագիտություն>>,<<Կենսաբանություն>>, <<Ինֆորմատիկա>>, <<Քիմիա>>, <<Աշխարհագրություն>> առարկաներից ՀՀ Վայոց ձորի մարզից դպրոցական փուլին հայտագրվել է ընդհանուր թվով 1708 աշակերտ:

Վայոց ձորի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում անցկացվել են շարադրությունների մրցույթներ, կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ, որոնք մեծապես նպաստել են դպրոցականների համակողմանի դաստիարակությանը:

2023 թվականի ամռանը ՀՀ Վայոց ձորի մարզից 140 երեխա հնարավորություն է ստացել 20 օր անցկացնել Կոտայքի մարզի <<Հասմիկ>> ամառային ճամբարում: Կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը 2 հերթափոխով կազմակերպել է երեխաների անվտանգ և ապահով տեղափոխումը:

ՀՀ կառավարության կողմից բամաթիվ ծրագրեր են իրականացվում կրթության ոլորտում: Վերանորոգվում են ուսումնական հաստատությունների շենքեր, կառուցվում են նորերը: Կառուցվել է Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցը, ընթացքի մեջ են Գոմքի, Չիվայի և Եղեգիսի միջնակարգ դպրոցների կառուցման աշխատանքները: Նախատեսվում է ստեղծել ժամանակի պահանջներին համահունչ կրթահամալիրներ:

Դեկտեմբերի 19-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում տեղի ունեցավ կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից կազմակերպված հաշվետու միջոցառում:

Կատարած աշխատանքների ամփոփման համատեքստում մեկ անգամ ևս արժևորվեց ուսուցչի, կրթության, մշակույթի և սպորտի ոլորտների պատասխանատուների նվիրական և անմնացորդ աշխատանքը երիտասարդ սերնդին լավագույն արժեքներով կրթելու, հայեցի դաստիարակություն տալու առաքելությունում: Կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից դպրոցներին նախապես ներկայացված 7 անվանակարգերում ՀՀ Վայոց ձորի մարզպետի կողմից 43 ուսուցիչ արժանացան շնորհակալագրերի:

Միջոցառման գեղարվեստական մասում <<Արմատ>> պարային համույթի և Եղեգնաձորի երաժշտական դպրոցի սաները հրաշալի կատարումներով հիացմունք և հաճելի պահեր պարգևեցին ներկաներին:

Երեխաներին դպրոցին նախապատրաստելու համար անգնահատելի է նախադպրոցական հաստատությունների դերը: Մարզում գործում են 17 նախադպրոցական ուսումնական հաստատություններ՝ Եղեգնաձոր համայնքում՝ 8 */ Եղեգնաձորի թիվ 1, Եղեգնաձորի թիվ 2, Եղեգնաձորի թիվ 5, Վերնաշենի, Գլաձորի, Գետափի, Մալիշկայի թիվ 1, Մալիշկայի թիվ 2/* , Արենի համայնքում ՝ 4 */ Աղավնաձորի, Արփիի, Ռինդի, Ագարակաձորի/*, Վայք համայնքում ՝ 3 */ Վայքի թիվ 1, Վայքի թիվ 3, Զառիթափի/* , Ջերմուկ համայնքում ՝ 2 */ <<Զատիկ>>, Գնդեվազի մանկապարտեզ/*:

Դեկտեմբերի 27-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմում հյուրընկալվել էին մարզում գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենները:

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Կոլյա Միքաելյանն արդյունավետ աշխատանքի համար 17 նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրեններին պարգևատրեց շնորհակալագրերով:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մարզում գործում են՝ երկու թանգարան՝ «Գլաձորի պատմամշակութային արգելոց թանգարան» ՀՀ կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան մարզային ենթակայությամբ, գերատեսչական ենթակայությամբ երկու պատկերասրահ՝ Եղեգնաձոր և Ջերմուկ քաղաքներում, երաժշտական դպրոց մարզային ենթակայությամբ, և չորս արվեստի դպրոցներ համայնքային ենթակայությամբ/ Վայք, Ջերմուկ, Արենի համայնք գ. Աղավնաձոր/: Երկու ՄՍԿ (մանկական ստեղծագործական կենտրոն)՝ Վայք և Եղեգնաձոր քաղաքներում: Մեկ գեղարվեստի դպրոց՝ Եղեգնաձոր քաղաքում:

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համակարգում է մարզային ենթակայությամբ 3 մարզային մշակութային ՊՈԱԿ-ների գործունեությունը. Եղեգնաձորի երաժշտական դպրոց, Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, Եղեգնաձորի մշակույթի կենտրոն:

2023 թվականը **Եղեգնաձորի երաժշտական դպրոցի** համար եղավ ձեռքբերումներով լի տարի: Դպրոցն ակտիվորեն մասնակցել է միջազգային և հանրապետական մրցույթներին՝ արժանանալով բարձր պարգևների և մրցանակային տեղերի:

Տարվա ընթացքում կազմակերպվել են նաև համերգներ՝ <<Քույր դպրոցներ>> ծրագրի շրջանակներում՝ Երևանի Կանաչյանի անվան երաժշտական դպրոցի հետ:

Դպրոցի երաժշտական գործիքները այս տարի համալրվեցին 4 դաշնամուրով, 1-ական քանոնով, ֆլեյտայով, շվիով:

Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում կազմակերպվել են համերգներ, ցուցադրվել են ֆիլմեր. հոկտեմբերի 12-ին՝ <<Դասարանցիները>>, հոկտեմբերի 24-ին՝ ճապոնական կինոփառատոնի շրջանակներում՝ << Սամուրայ կատուն>>:

Հոկտեմբերի 18-ին ՀՀ ԿԳՄՍ նախարարության դպրոցական բաժանորդային համակարգ ծրագրի շրջանակներում, Եղեգնաձորի մշակույթի կենտրոնում բեմադրվեց Գորիսի պետական թատրոնի <<Աշնան արև>> ներկայացումը, որին մասնակցեցին շուրջ 450 դպրոցականներ:

Բաժանորդային համակարգը հնարավորություն է տալիս ՀՀ հանրակրթական դպրոցներում սովորող աշակերտներին, անկախ սոցիալական կարգավիճակից, բնակության վայրից և մշակութային հաստատության հասանելիությունից, մասնակցելու իր համայնքի կամ ՀՀ ցանկացած այլ քաղաքի մշակութային միջոցառմանը:

Դեկտեմբերի 26-ին Վայոց ձորի մարզում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության և Եղեգնաձորի մշակույթի կենտրոնի համատեղ ջանքերով անցկացվեց <<Մենք ենք, մեր համայնքները>> խորագրով մշակութային փառատոն: Փառատոնի նպատակն էր բացահայտել համայնքների մշակութային ներուժը, խթանել մշակութային կյանքը, աշխուժացնել միջհամայնքային մշակութային կապերը: Փառատոնը մեկնարկվեց Եղեգնաձորի զինվորական պանթեոն քայլերթով. երթի մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին Արցախյան պատերազմներում զոհված ազատամարտիկների շիրիմներին և նրանց հիշատակը հավերժացնող հուշակոթողին:

Միջոցառման հաջորդ հատվածում բոլոր համայնքները ներկայացրեցին իրենց <<մշակութային>> տաղավարները. հարուստ, բազմազան, գունեղ ցուցանմուշներն արտացոլում էին մշակույթի տարբեր ճյուղեր՝ ձեռագործ աշխատանքներ, կիրառական արվեստ, զարդարվեստ, նկարչություն, քանդակ, փայտամշակում, ծղոտագործություն և այլն: Արվեստի և արհեստի ստեղծագործությունները բացահայտում էին մարզում գործող մշակութային հաստատությունների, արվեստի դպրոցների ստեղծագործական հնարավորությունները, ներուժը, գործունեության հիմնական ուղղությունները: Այնուհետև համայնքները ներկայացրեցին պարային և երաժշտական գեղեցիկ ելույթներ:

Դեկրեմբերի 28-ին կազմակերպվեց <<Ամանորի երեկո>> խորագիրը կրող տոնական միջոցառում:

Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում 2023թ. երկրորդ կիսամյակում կատարվել են հետևյալ աշխատանքները.

1.Համագործակցություն Վիրջինիայի համալսարանի պրոֆեսորների հետ. Հունարեն արձանագրությամբ զոհասեղանի ուսումնասիրություն և արձանագրության արտատպում:
2.Թանգարանի բացօթյա սրահի կառուցման և բարեկարգման աշխատանքներ /շարունակական/:
3.Կավագործության վարպետաց դաս:
4.Համագործակցություն ֆոտո ստուդիայի հետ՝ հայկական տարազներով լուսանկարահանումներ /շարունակական/:
5.Գորգերի և ձեռագործ աշխատանքների ցուցադրություն «Կենաց ծառ» վերնագրով՝ «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումների շրջանակներում՝ «Կենսունակ ժառանգություն» խորագրի ներքո:
6.Միջոցառում «Նվիրիր հաց» թեմայով՝ «Եվրոպական ժառանգության օրեր» միջոցառումների շրջանակներում՝ «Կենսունակ ժառանգություն» խորագրի ներքո:
7.Միջոցառում-համագործակցություն Վայոց ձորի մարզային գրադարանի հետ՝ «Անտիկ շրջանից մինչև 8-րդ դար» խորագրով:
8.Համագործակցություն Եղեգնաձորի գեղարվեստի դպրոցի հետ՝ «Աշնանային գունապնակ» խորագրով:

Նոյեմբերի 7-ին կազմակերպվեց <<Սյունիք- Վայոց ձոր մշակութային կամուրջ>> խորագիրը կրող միջոցառումը: Միջոցառմանը մասնակցում էին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքներից շուրջ 30 երեխաներ:

Նոյեմբերի 21-ին Եղեգնաձորի երկրագիտական թանգարանում կազմակերպվեց <<Հայ զինվորին, Հայրենիքին>> խորագիրը կրող ցուցահանդես և հուշ -երեկո:

Վերոնշյալ միջոցառումներին զուգահեռ՝ թանգարանում շարունակվում են հիմնական աշխատանքները՝ առարկաների մշակում, գրանցում, վերամշակում և թվայնացում, էքսկուրսիա, գիտական նյութերի մշակումներ և այլն:

ՍՊՈՐՏ

Մարզային մշակութային և սպորտային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումներ անցկացնելու համար համապատասխան կազմակերպությունների հետ մշակվել է միջոցառումների պլան և վերահսկվել ըստ ժամանակացույցի միջոցառումների նախապատրաստական և իրականացման աշխատանքները:

Ըստ ժամանակացույցի Վայոց ձորի մարզում անցկացվել են ֆուտբոլի,բասկետբոլի, վոլեյբոլի, շախմատի առաջնություններ, հուշամրցաշարեր, դպրոցականների սպորտլանդիաներ, սպարտակիադաներ, ռազմամարզական խաղեր:

Հուլիսի 5-ին՝ Երևանում, շուրջ 150 երիտասարդներով և պատանիներով մասնակցել ենք <<Մենք>> պետական և ազգային արժեքների հանրահռչակման հիմնադրամի կողմից կազմակերպված ՀՀ պետական խորհրդանշաններին նվիրված տոնական քայլերթին:

Օգոստոսի 5-ին Գյումրիում Համահայկական ամառային 8-րդ խաղերի բացման արարողությանը մարզը մասնակցեց 98 հոգանոց պատվիրակությամբ:

Համահայկական խաղերի բազկամարտի առաջնությանը մարզի ներկայացուցիչ՝ Քրիստինե Հովհաննիսյանը մինչև 65 կգ քաշային կարգում ձախ ձեռքի մրցույթում գրավեց երկրորդ տեղը, իսկ

աջ ձեռքի մրցույթում հաղթելով բոլոր մրցակիցներին հռչակվեց համահայկական 8-րդ խաղերի չեմպիոն և արժանացավ ոսկե մեդալի:

Համահայկական խաղերի ֆուտզալի առաջնության մրցույթին Ջերմուկի թիմը 2:1 հաշվով հաղթեց Փարիզի հավաքականին և դուրս եկավ 1/8-րդ եզրափակիչ:

Օգոստոսի 15-ին Երևանում կայացավ համահայկական խաղերի վոլեյբոլի՝ Վանաձոր – Եղեգնաձոր կիսաեզրափակիչ խաղը, որտեղ մեր թիմը գրավեց չորրորդ պատվավոր տեղը:

Ընդհանուր առմամբ մարզը համահայկական խաղերին անհատական մրցաձևերում ունեցավ մեկ ոսկե,մեկ արծաթե մեդալներ և թիմային մարզաձևերում չորրորդ և ութերորդ տեղեր:

Օգոստոսի 19-ին Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքում տեղի ունեցավ <<ՀՀ Վարչապետի գավաթ>> լողի սիրողական մրցաշարը: Մրցաշարին մասնակցեց Աղավնաձոր համայնքից Արսեն Շահինյանը, գրավեց 9-րդ տեղը լավագույն տասնյակում և արժանանացավ դրամական պարգևի:

Սեպտեմբերի-հոկտեմբեր ամիսներին անցկացվել է <<ՀՀ մարզերի և Երևան քաղաքի հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադա>> մարզական միջոցառման շախմատի, վոլեյբոլի, բասկետբոլի և սեղանի թենիսի մարզային և եզրափակիչ փուլերը:

Նոյեմբերի 4-ին Էջմիածնում կայացավ <<ՀՀ Վարչապետի գավաթ>> խճուղավազքի եզրափակիչ փուլը: Մարզի 22 ներկայացուցիչներից Նիկիտա Ծատուրյանը գրավեց 6-րդ տեղը և արժանացավ դրամական պարգևի:

Նոյեմբերի 14-ին Եղեգնաձորի քաղաքային մարզադաշտում, ՀՖՖ-ի հետ համատեղ, երեք տարիքային խմբերով կազմակերպվեց և անցկացվեց ՀՀ դպրոցականների պատանիների ֆուտբոլի առաջնության մարզային փուլը: Մարզային փուլում հաղթողներ ճանաչվեցին՝ Աղավնաձորի, Եղեգնաձորի թիվ 2 հիմնական և Արենիի դպրոցների թիմերը, որոնք էլ իրավունք ձեռք բերեցին մասնակցելու առաջնության միջմարզային փուլին:

Տարածաշրջանային փուլին մասնակցեցին մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններից 63 թիմ, շուրջ 630 աշակերտ: Մարզային փուլին մասնակցեցին 15 դպրոցներ և շուրջ 150 աշակերտներ:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ և ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է 2022-23թթ. տարեկան գործունեության ծրագրի մշտադիտարկման, մարզի փոքր և միջին ձեռնարկությունների մասին տեղեկատվության ստացման և վերլուծության աշխատանքներ:

Կատարվել են մարզի փոքր և միջին ձեռնարկատիրության ծրագրերի առաջնահերթությունների և գերակայությունների որոշման, զարգացման ծրագրերի քննարկման աշխատանքներ: Ապահովվել է փոքր և միջին ձեռնարկությունների ոլորտով զբաղվող նախարարությունների, գերատեսչությունների, մարզային կառույցների և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը:

Կազմակերպվել է մարզի ընթացիկ և հեռանկարային սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, ծրագրերի նախագծերի քննարկման համար անհրաժեշտ փաստաթղթերի, զեկուցման նյութերի հավաքագրման, պատրաստման աշխատանքները:

Կազմակերպվել և իրականացվել է տնտեսական վիճակի վերլուծություն, ծրագրերի կատարման ընթացքի և արդյունքների վերլուծության աշխատանքներ:

Իրականացվել է եռամսյակային հաշվետվությունների կազմում և վերլուծություն:

Զբոսաշրջություն

Զբոսաշրջության բնագավառի պետական քաղաքականության իրականացման նպատակով ապահովվվել է բոլոր շահագրգիռ կողմերի՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, մասնավոր հատվածի և բնակչության ակտիվ ու արդյունավետ համագործակցությունը, որն էլ նպաստել է զբոսաշրջիկների թվի աճին:

Մարզում զբոսաշրջության առավել զարգացման և աշխուժացման նպատակով մասնակցել է ներդրումային ծրագրերի կազմման և մշակման աշխատանքներին, մասնավորապես «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքի զարգացման» ծրագրի «Ինստիտուցիոնալ զարգացում» բաղադրիչի շրջանակներում «Արենի հանգույցի վերականգնում» ենթածրագրի (միջազգային կազմակերպության կողմից կատարվում է ծրագրի արդյունավետության գնահատումը, որը կավարտվի 2024 թ.-ի փետրվարին, որին կհաջորդի իրականացման փուլը: նախատեսվում են 3 մլն ԱՄՆ դոլլարին համարժեք ներդրումներ), Ջերմուկի զբոսայգու բարեկարգման, Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի և Ջերմուկի խորհրդնիշ եղնիկի արձան տանող ճանապարհի շրջակա ժայռերի լուսավորության իրականացման աշխատանքներին:

Աշխատանքներ են կատարվել մարզի մոտ 1400 պատմամշակութային և ճարտարապետական հուշարձանների, բնական տեսարժան վայրերի, բուսական և կենդանական աշխարհի բազմազանության, էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրության, առողջարանների և հանգստյան գոտիների ճանաչվածությունը և ձմեռային զբոսաշրջության համար նրանց կարողությունները պատշաճ ներկայացնելու ուղղությամբ՝ դրանով իսկ մարզը դարձնելով զբոսաշրջության համար գրավիչ և նպաստավոր տարվա 4 եղանակների համար:

Զբոսաշրջության պետական կոմիտեի հետ համատեղ քննարկվել են Վայոց ձորի տուրիստական այլընտրանքային եղանակների զարգացման ուղղությունները, հեռանկարները և իրականացման ռազմավարությունը: Ինչպես նաև պարբերաբար մշակվել են հյուրատների զարգացման ծրագրեր:

Ակտիվորեն մասնակցել է ՀՀ ԷՆ զբոսաշրջության կոմիտեի կողմից ներքին զբոսաշրջության խթանման նպատակով կազմակերպված «Ճանաչիր Հայաստանը» խորագրով ցուցահանդեսի իրականացման աշխատանքներին՝ լավագույնս ներկայացնելով մարզի զբոսաշրջային ներուժը: Մասնակցել և ընթացիկ աշխատանքներ է կատարել հուլիսի 30-ին Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղում կայանալիք «Ծիրանի փառատոն»-ի շրջանակներում:

2023թ. սեպտեմբերի 15-ից 17-ը Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայանալիք «Արմենիա Էսպո 2023» 22-րդ տարածաշրջանային ունիվերսալ առևտրաարդյունաբերական ցուցահանդեսային ֆորումի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրել է մարզի համայնքներին և շահագրգիռ կազմակերպություններին: 2023թ. սեպտեմբերի 6-ից 10-ը Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում կայանալիք «Toon Expo 2023 Vol.2» ցուցահանդեսի վերաբերյալ գրությունը ներկայացրել է մարզի համայնքներին և ապահովել տրամադրված բուկլետների տարածումը:

Հավաքագրել և ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտե է ներկայացրել ՀՀ Վայոց ձորի մարզի հիմնական այցելվող տեղեկատվական վահանակների տեղադրման կարիք ունեցող պատմամշակութային վայրերի ցանկը:

Մասնակցել է Հայաստանի Հանրապետության զբոսաշրջության զարգացման 2024-2028 թվականների ռազմավարության մշակման աշխատանքներին:

Վայոց ձորի զբոսաշրջային քարտեզի ռեսուրսների հավաքագրման աշխատանքներին: Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև զբոսաշրջության զարգացման ճանապարհային քարտեզի նախագիծը մանրամասն ուսումնասիրել և քննարկել է մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների և զբոսաշրջության ոլորտի ներկայացուցիչների հետ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի համապատասխան աշխատակիցների հետ քննարկվել է «Զբոսաշրջային կլաստերների զարգացման» հայեցակարգը և ներկայացվել առաջարկություններ:

Մասնակցել է Ճապոնիայի դեսպանատան կողմից կազմակերպվող դրամաշնորհային ծրագրերի տեղեկատվական հանդիպմանը և շարունակական աշխատանքներ է կատարել՝ համայնքների կողմից ներկայացվող դրամաշնորհային ծրագրերի մշակման ուղղությամբ:

Ընթացիկ աշխատանքներ են կատարվել Երևան–Մեղրի ճանապարհից հեռու գտնվող զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմամշակութային հուշարձանների ենթակառուցվածքները զարգացնելու, ինչպես նաև նրանց մասին համարժեք տեղեկատվության տարածումն ապահովելու ուղղությամբ՝ նպաստելով նաև էկոտուրիզմի, բնական տուրիզմի, արկածային տուրիզմի, գաստրոտուրիզմի, գիտական տուրիզմի, անձավագիտական տուրերի, լեռնային և հետիոտն երթերի, կանիոնինգի (ժայռամագլցման), ձկնորսության, պատմամշակութային տուրիզմի զարգացմանը:

Աշխատանք է կատարվել՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի կողմից կազմակերպվելիք սկսնակ (վերջին երկու տարում գործունեություն ծավալող) հյուրատների գործունեության բարելավմանն ուղղված անվճար սեմինարների իրականացման ուղղությամբ:

Հավաքագրել և վերլուծել է մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտների զբաղվածության վերաբերյալ տեղեկատվության:

Մասնակցել է զբոսաշրջության պետական կոմիտեի տարեկան հաշվետվության ամփոփման աշխատանքներին, որի ընթացքում սկիզբ դրվեց 20 զբոսաշրջային կլաստերների իրականացման աշխատանքներին: Բաժնի կողմից առաջարկվել էր մարզի զբոսաշրջային ներուժի զարգացման 7 կլաստեր, որից ընդունվել էր 6-ը: 2024 թվականին կսկսվի առաջին կլաստերի աշխատանքների իրականացումը, որն ուղղված է Արենի համայնքի և գինու տուրիզմի զարգացմանը:

Արտաքին կապեր

Արտաքին կապերի զարգացման արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ գործնական փոխշահավետ կապերի ստեղծման ուղղությամբ պարբերաբար իրականացվել են աշխատանքները:

Աշխատանքներ են կատարվել հայ-լեհական, հայ-բելառուսական, հայ- չինական, հայ-բուլղարական, հայ-ուկրաինական, հայ-լատվիական տնտեսական համագործակցության արձանագրությունների կետերի կատարման ուղղությամբ, որոնց շրջանակներում մասնակցություն է ապահովվել միջազգային կազմակերպությունների

կողմից կազմակերպված առցանց սեմինարների, հանդիպումների, քննարկումների և դասընթացների:

Մշտական ուշադրության կենտրոնում է գտնվել բազմակողմանի համագործակցային հարաբերությունների զարգացումն ու խորացումը Իրանի Իսլամական Հանրապետության Խոյ քաղաքի կուսակալության, ՌԴ (Նիժնի-Նովգորոդի և Արխանգելսկի մարզ), Բելոռուսիայի Հանրապետություն (Մինսկի): Համայնքների հետ քննարկվել է ՀՀ Վայոց ձորի մարզի միջտարածաշրջանային համագործակցության հարցը և մասնակցել է համապատասխան ձևաչափերով տեղեկատվության ներկայացման աշխատանքներին:

Համաձայն ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ 23.01.2023թ. թիվ ԳՍ/17.3/1797-2023 գրության՝ պարբերաբար մշակվել և ՀՀ ՏԿԵՆ են ներկայացվել 2022թ. հունիսի 29-30-ը Լիոնում կայացած հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության վերաբերյալ տեղեկատվություն:

Մասնակցել է Հայաստանի և Ֆրանսիայի միջև ապակենտրոնացված համագործակցության ընդլայնման քաղաքականության շրջանակներում մայիսի 2-ին Օ-դը-Ֆրանս շրջանային խորհրդի նախագահ Քզավիե Բերտրանի գլխավորած պատվիրակության ընդունման նախապատրաստական աշխատանքներին:

Մասնակցել է Վայոց ձորի մարզի և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Անհոյ նահանգի միջև Բարեկամական հարաբերություններ հաստատելու մտադրության մասին հուշագրի կնքման նախապատրաստական աշխատանքներին և ընթացքին: Մանրամասն ուսումնասիրել է «ՀՀ մարզերի և ՌԴ Կրասնոդարի երկրամասի միջև 2023-2024թթ. համագործակցության ճանապարհային քարտեզը», ՀՀ ԱԳ նախարարության կողմից ներկայացված առաջարկները և քննարկվել մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների հետ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի՝ հանձնարարականը՝ Հայաստանի քաղաքներից մեկի և Տյումեն քաղաքի քույրացման մասին հուշագրի հնարավոր ստորագրման վերաբերյալ, քննարկել է մարզի համայնքների հետ և ներկայացրել համագործակցության առաջարկներ:

ԲՐԻԿՍ երկրների նորարարությունների միջազգային համաժողովի մասնակցության վերաբերյալ հրավերը քննարկել է մարզպետի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների և համայքների հետ:

Վայոց ձորի մարզը մշտապես կարևորում է սփյուռքահայերի, սփյուռքի կառույցների և հատկապես գործընկեր մարզերում հայկական համայնքների հետ աշխատանքի դերը ինչպես Հայաստան-Սփյուռք գործակցության, այնպես միջտարածաշրջանային համագործակցության ամրապնդման և զարգացման գործում, որի արդյունքում ամուր կապեր են հաստատվել արտասահմանում գտնվող հայ համայնքների և կառույցների հետ: ՀՀ ՏԿԵ նախարարի ՝ 13.06.2023 թվականի թիվ /42.1/20154-2023 գրությունը՝ ««iԳործ» սփյուռքահայ մասնագետների ներգավում ՀՀ և ԱՀ պետական կառավարման համակարգում» ծրագրով նախատեսված միջոցառման վերաբերյալ, մանրամասն ուսումնասիրվել է և քննարկել է մարզի համայնքների հետ՝ նախատեսվող այցի կազմակերպման նպատակով կատարելով համապատասխան աշխատանք: Մասնակցել է նաև մարզի բոլոր համայնքների երիտասարդների հավաքագրման աշխատանքներին:

ՀՀ Վարչապետի մոտ կայացած խորհրդակցության արձանագրության կետերի վերաբերյալ հանձնարարականները ներկայացրել է մարզի համայնքներին և ընթացքի մասին տեղեկատվությունը տրամադրել ՀՀ ՏԿԵՆ:

Շարունակական աշխատանքներ է կատարվել «Արահետներ հանուն փոփոխության համար» ՀԿ-ի կողմից կազմակերպվող «Երիտասարդներ հանուն փոփոխության» (Youth For Change) կրթական ծրագրի կազմակերպման շրջանակներում: Ուսումնասիրվել է ներկայացված տեղեկատվական փաթեթը և ծրագրի համակարգողին ներկայացվել են առաջարկներ:

ՀՀ Վարչապետի՝ 2021թ. հունիսի 4-17-ը ՀՀ մարզերում և համայնքներում նախընտրական հանդիպումների ընթացքում արծարծված խնդիրների կարգավորմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ հանձնարարականը քննարկել է մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների հետ և մասնակցել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից ներկայացված տեղեկատվության մշակմն աշխատանքներին:

Ուսումնասիրել և համայնքներին է ներկայացրել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից (ՄԱԶԾ) մեկնարկած «ԵՄ-ն հանուն երկխոսության. Աջակցություն հարավային Կովկասում և Մոլդովայի Հանրապետությունում հակամարտությունների փոխակերպմանը (Բաղադրիչ 2)» ծրագիրը

Մասնակցել է «ՀՀ ռազմավարական զարգացման կենտրոն» հիմնադրամի կողմից կազմակերպված Տարածքների ինտեգրված զարգացմանը նվիրված կլոր սեղանին, որտեղ

քննարկվել են քաղաքային զբոսայգիների զարգացման, մշակութային ժառանգության պահպանության, ՀՀ մարզերում զբոսաշրջության զարգացման և այլ հարցեր:

Հավաքագրել և ՀՀ ՏԿԵՆ է ներկայացրել մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային պարկերի և տոպրակների վաճառքի արգելքն իրականացնելու ուղղությամբ ՏԻՄ-երի կողմից տարվող վերահսկողության վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն:

Սուբվենցիոն ծրագրեր

2023 թվական տեղափոխված ծրագրերն՝ ըստ համայնքների

2022 թվականից 2023 թվական տեղափոխվել է 6 ծրագիր և 3 ենթածրագիր՝ **1 մլրդ 270 մլն ՀՀ դրամ** արժողությամբ:

- **Ջերմուկ համայնք՝ 2 ծրագիր**
    1. Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի սկզբնամասում գտնվող Վ. Սարգսյանի անվան զբոսայգու բարեկարգման աշխատանքներ, Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների պուրակի բարեկարգման աշխատանքներ /ծրագիր՝ շուրջ 44 մլն ՀՀ դրամ արժողությամբ/: Աշխատանքներն ավարտված են:
    2. Ջերմուկ համայնքի կարիքների համար մեքենասարքավորումների ձեռք բերում /ծրագիր՝ շուրջ 116,5 մլն ՀՀ դրամ արժողությամբ/: Նախապատրաստվում է մրցույթի:
- **Վայք համայնք՝ 1 ծրագիր և 1 ենթածրագիր**
    1. Վայք համայնքի Վայք քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի, Ջերմուկ խճուղու, Փոռ բնակավայրի, Սարավան-Սարալանջ բնակավայրի գազատարեր տեղադրելու աշխատանքներ /ծրագիր՝ շուրջ 76 մլն ՀՀ դրամ արժողությամբ/: Համայնքի բյուջեում գումար չլինելու պատճառով ծրագիրը չի իրականացվում:
    2. Վայք համայնքի Շահումյան փողոցի ասֆալտապատում /ենթածրագիր՝ 407 մլն ՀՀ դրամ արժողությամբ/: Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 99%-ով:
- **Արենի համայնք՝ 2 ծրագիր**
    1. Արենի համայնքի Ելփին բնակավայրում մանկապարտեզի շենքի կառուցում /ծրագիր՝ շուրջ 76 մլն ՀՀ դրամ արժողությամբ/: Աշխատանքներն ընթացքի մեջ են, կատարվել են 50%-ով:

3. Արենի համայնքի Աղավնաձոր բնակավայրում 25-րդ փողոցի, 3-րդ փողոցի վերջնամասի և 1-ի փողոց 4-րդփակուղու Արփի բնակավայրում 1-ին փողոցի 700 գծմ հատվածի ասֆալտապատում /ծրագիր՝ շուրջ 195 մլն ՀՀ դրամ արժողությամբ/: Աշխատանքներն ավարտված են:

- **Եղեգնաձոր համայնք՝ 1 ծրագիր և 2 ենթածրագիր**

4. Մյասնիկյան փողոցի ասֆալտապատում /շուրջ 50,8 մլն ՀՀ դրամ արժողությամբ/: Աշխատանքներն ավարտված են:
5. Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի ջրամատակարարման վերակառուցման աշխատանքներ /շուրջ 41,3 մլն ՀՀ դրամ արժողությամբ/: Աշխատանքներն ավարտված են:
6. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում ծրագիր՝ /շուրջ 264,3 մլն ՀՀ դրամ արժողությամբ/: Աշխատանքներն ավարտված են:

2023 թվականին կատարված սուբվենցիոն ծրագրերի վերաբերյալ

2023 թ. համար մարզի համայնքների կողմից մարզպետի աշխատակազմ է ներկայացվել **29 սուբվենցիոն հայտ** (**Եղեգնաձոր՝** 1 ծրագիր, **Ջերմուկ՝** 4 ծրագիր, **Վայք՝** 12 ծրագիր, **Արենի՝** 7 ծրագիր, **Եղեգիս՝** 5 ծրագիր)՝ **4 մլրդ 362 մլն ՀՀ դրամ** արժողությամբ, **որից 1 մլրդ 911 մլն ՀՀ դրամը կամ 43,8 %-ը համայնքների ներդրումն է, 2 մլրդ 451 մլն ՀՀ դրամը կամ 56,2 %-ը՝ սուբվենցիայի գումարն է:**

ՀՀ պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2022 թվականի հունիսի 23-ի N 940-Ն որոշման համաձայն՝ վերոնշյալ հայտերի շրջանակներում համայնքները հասցրել են ներկայացնել **12 սուբվենցիոն ծրագրերի** ամբողջական փաթեթներ, որոնցից **10 ծրագիր** /ընդհանուր արժեքը՝ շուրջ **752,4 մլն** ՀՀ դրամ, ՀՀ պետական բյուջեի համաֆինանսավորում՝ **485,7 մլն** ՀՀ դրամ, ՀՀ համայնքների համաֆինանսավորումը՝ **266,7 մլն** ՀՀ դրամ/ հաստատվել են ՀՀ

համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման 1.2 կետով հաստատված կարգի 26-րդ կետի պահանջի համաձայն՝ պետական բյուջեից սուբվենցիա հատկացնելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն **ներկայացվել է 13 ծրագիր՝ Վայք համայնք՝ 3 ծրագիր, Եղեգնաձոր համայնք՝ 1 ծրագիր, Ջերմուկ համայնք՝ 4 ծրագիր, Եղեգիս համայնք՝ 3 ծրագիր և Արենի համայնք՝ 2 ծրագիր.**

1. «Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի և Ջերմուկի խորհրդանիշ եղնիկի արձան տանող ճանապարհի շրջակա ժայռերի լուսավորության իրականացում» սուբվենցիոն ծրագրի **«Ջերմուկի խորհրդանիշ եղնիկի արձան տանող ճանապարհի շրջակա ժայռերի լուսավորության իրականացում» ենթածրագիր**. 19.05.2023 թվականին շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ «Սուսմետ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, որի արժեքն **է 7,53 մլն ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 3,01 մլն ՀՀ դրամ կամ 40%**: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «Ստյոպշին» ՍՊԸ: Կատարվել են հողային աշխատանքներ, անցկացվել է էլեկտրական մալուխ, տեղադրվել են հենասյուներ և լուսատուներ: Աշխատանքներն ավարտվել են: 06.12.2023 թվականին ընդունող հանձնաժողովի կողմից տրվել է նախնական դրական եզրակացություն:
2. «Ջերմուկի քաղաքային և Կեչուտ գյուղի գերեզմանատների բարեկարգում, Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ 7 շենքին և Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ 22 շենքին կից աստիճանների հիմնանորոգում, Ջերմուկ համայնքի աղբամանների տեղակայման վայրերի բարեկարգում» սուբվենցիոն ծրագրի «Ջերմուկի քաղաքային և Կեչուտ գյուղի գերեզմանատների բարեկարգում», «Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ 7 շենքին և Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ 22 շենքին կից աստիճանների հիմնանորոգում», «Ջերմուկ համայնքի աղբամանների տեղակայման վայրերի բարեկարգում» ենթածրագրեր: Ծրագրի ընդհանուր արժեքն՝ 92 907 500 ՀՀ դրամ, **որից համայնքի մասնաբաժինը կազմում է** ՝46 453 750 ՀՀ դրամ կամ **50%:** Շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններն են՝

Ջերմուկշին» ՓԲԸ, «Սուսմետ» ՍՊԸ: Պայմանագրերի կնքման ամսաթվերն են՝ 11.05.2023թ., 11.05.2023թ., 11.05.2023թ.: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպություններն են՝ Ստյոպշին» ՍՊԸ, «Պռոշաբերդշին» ՍՊԸ, «Ստյոպշին» ՍՊԸ:

3. Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի սկզբնամասում գտնվող Վ. Սարգսյանի անվան զբոսայգու բարեկարգման աշխատանքներ, Ջերմուկ քաղաքի Ազատամարտիկների պուրակի բարեկարգման աշխատանքներ: Ծրագրի ընդհանուր արժեքն՝ 78 956 260ՀՀ դրամ, **որից համայնքի մասնաբաժինը կազմում է** ՝ 43 425 943ՀՀ դրամ կամ **55%:** Շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններն են՝ «Պռոշաբերդ» ՍՊԸ, «Ջերմուկշին» ՓԲԸ: Պայմանագրերի կնքման ամսաթվերն են՝ 15.08.2022թ. 18.08.2022թ.: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն՝ «Պռոշաբերդշին» ՍՊԸ:
4. «Ջերմուկ քաղաքի Արփա գետի կիրճի և Ջերմուկի խորհրդանիշ եղնիկի արձան տանող ճանապարհի շրջակա ժայռերի լուսավորության իրականացում» : Ծրագրի ընդհանուր արժեքն՝ 44 612 884ՀՀ դրամ, **որից համայնքի մասնաբաժինը կազմում է** ՝ 17 846 ՀՀ դրամ կամ **40%:** Շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններն են՝ «Հովզավ» ՍՊԸ, «Սուսմետ» ՍՊԸ: Պայմանագրերի կնքման ամսաթվերն են՝ 22.05.2023թ., 19.05.2023թ.Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն՝ «Ստյոպշին» ՍՊԸ:
5. «Վայք համայնքի Վայք քաղաքի Մայիսյան փողոցի մասնակի վերանորոգում, Շինարարների փողոց հատված 0+000 կմ+112, 0+112 կմ, 0+403 մասնակի վերանորոգում և Հերհեր բնակավայրի 1-ին փողոցի ասֆատապատում» սուբվենցիոն ծրագրի **«Հերհեր բնակավայրի 1-ին փողոցի ասֆալտապատման աշխատանքներ» ենթածրագիր**: 17.05.2022 թվականին շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ «ԱմիրխանյանՇին» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, որի արժեքն **է 32,865 մլն ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 18,076 մլն ՀՀ դրամ կամ 55%**: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «ՄԳ-Պրոմիլ» ՍՊԸ: Հերհեր բնակավայրում ասֆալտապատման աշխատանքները ավարտվել են, գտնվում է սուբվենցիա ստանալու գործընթացում: 2022 թվականի նոյեմբերին շահագործման

ընդունող հանձնաժողովը կատարել է այց, որի ընթացքում ակնադիտական ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ աշխատանքները կատարվել են անորակ: Նշանակվել է ասֆալտի երկրորդ լաբարատոր հետազոտություն, չնայած առաջինը հետազոտությունը դրական էր: Երկրորդ լաբարատոր հետազոտություն ևս դրական էր, ուստի 2023 թվականի նոյեմբեր ամսին ընդունող հանձնաժողովի կողմից տրվել է նախնական դրական եզրակացություն:

6. «Վայք համայնքի Շահումյան և Իսրայել Օրի փողոցների ասֆալտապատում» սուբվենցիոն ծրագրի «**Վայք համայնքի Շահումյան փողոցի ասֆալտապատում» ենթածրագիր**. 06.09.2022 թվականին շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ «Մավշին» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, որի արժեքն **է 394,881 ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 217,184 մլն ՀՀ դրամ կամ 55%**: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «Ամետիս» ՍՊԸ: Շահումյան փողոցում ասֆալտապատման աշխատանքներն ընթացքի մեջ են. կատարվել է աշխատանքների 99 %-ը:
7. Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի «Շարաֆ սուլթան» և «Մեշտեղ բանի» կոչվող հանդամասերում և Գոմք բնակավայրերի ոռոգման ցանցերի կառուցման աշխատանքներ «Գոմք բնակավայրի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ»: 06.05.2022 թվականին շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ «ԷկոԲիլդինգ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, որի արժեքն **է 24 մլն ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 8 400 00 ՀՀ դրամ կամ 35%**: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «Վոլմ Քոմփանի» ՍՊԸ:
8. «Վայք համայնքի Մարտիրոս, Սերս և Բարձրունի բնակավայրերի ոռոգման ջրի ջրագծերի, գլխամասային կառույցների արտաքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ» ծրագրի «Վայք համայնքի Բարձրունի բնակավայրի ոռոգման ջրի ջրագծի, գլխամասային կառույցի արտաքին ցանցի հիմնանորոգման աշխատանքներ» և «Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներ»: Ծրագրի ընդհանուր արժեքն՝ 73485400 ՀՀ դրամ, **որից համայնքի մասնաբաժինը կազմում է** ՝ 22 045 620 ՀՀ դրամ կամ **30 %:** Շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպություններն են՝ «Պռոշաբերդ» ՍՊԸ, «Ջերմուկշին» ՓԲԸ: Պայմանագրերի կնքման ամսաթվերն են՝

15.08.2022թ. 18.08.2022թ.: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն՝ «Պռոշաբերդշին» ՍՊԸ:

9. «Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի ջրամատակարարման վերակառուցման աշխատանքներ սուբվենցիոն ծրագիր 26.04.2023 թվականին շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ «Արմանշին» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, որի արժեքն **է 41 300 000 ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 14 455 000 ՀՀ դրամ կամ 35%**: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «Ստյոպշին» ՍՊԸ:
10. «Արենի համայնքի Արենի բնակավայրում «Խաչի տակ» թաղամասում ոռոգման ջրի մղիչ պոմպի կառուցում, Աղավնաձոր բնակավայրում «Վերին թաղի» ոռոգման ցանցի 400 գծմ հատվածի կառուցում» սուբվենցիոն ծրագրի **«Խաչի տակ» թաղամասում ոռոգման ջրի մղիչ պոմպի կառուցում ենթածրագիր:** 08.05.2023 թվականին շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ «Արման Վահե Կոստանյաններ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, որի արժեքն **է 36,150 մլն ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 10,844 մլն ՀՀ դրամ կամ 30%**: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «Ստյոպշին» ՍՊԸ: Հողային, անհրաժեշտ նյութերի, սարքերի ձեռքբերման, ջրագծի կառուցման աշխատանքներն ավարտվել են: 08.12.2023 թվականին ընդունող հանձնաժողովի կողմից տրվել է նախնական դրական եզրակացություն:
11. «Խաչիկ բնակավայրում՝ «Մկնակտրեկ» հանդամասում, խմելու ջրի մեկ կապտաժի կառուցում և երկու կապտաժի բարեկարգման աշխատանքներ»: 12.06.2023 թվականին շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ «Խաչիկ Գրիգորյան Կնյազի» Ա/Ձ -ի հետ կնքվել է պայմանագիր, որի արժեքն **է 22 500 000 ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 6 750 000 ՀՀ դրամ կամ 30%**: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «Պռոշաբերդշին» ՍՊԸ:
12. «Եղեգիս համայնքի Վարդահովիտ բնակավայրի խմելու ջրի արտաքին ցանցի վերակառուցում և Սալլի, Հորս, Գողթանիկ բնակավայրերի խմելու ջրագծերի կառուցում» ծրագիր: 26.05.2023 թվականին շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ «Արմանշին» ՍՊԸ-ի հետ կնքվել է

պայմանագիր, որի արժեքն **է 21 654 000 ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 7 578 900 ՀՀ դրամ կամ 35%**: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «Ստյոպշին» ՍՊԸ: Աշխատանքներն ավարտվել են ժամկետներում:

13. Եղեգիս Եղեգիս համայնքի Շատին, Աղնջաձոր, Թառաթումբ, Քարագլուխ և Արտաբույնք բնակավայրերի փողոցային լուսավորության ցանցի կառուցում 31.03.2022 թվականին շինարարական աշխատանքներ իրականացնող կազմակերպության՝ «Պետրոսյան ՇԻՆ» ՍՊԸ» ՍՊԸ-ի հետ կնքվել է պայմանագիր, որի արժեքն **է 28 754 772 ՀՀ դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 12 939 647 ՀՀ դրամ կամ 45%**: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «Ստյոպշին» ՍՊԸ:
14. «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ, Քարագլուխ, Աղնջաձոր, Հերմոն, Հորբատեղ, Գողթանիկ, Հորս և Եղեգիս բնակավայրերի ոռոգման առուների վերանորոգում»: Ծրագրի ընդհանուր արժեքն է ՝ 179 368 782ՀՀ դրամ, **որից համայնքի մասնաբաժինը կազմում է 62 779 074 ՀՀ դրամ կամ 35%**: Շինարարական աշխատանքների /կամ մեքենասարքավորումների ձեռբերման/ համար մրցույթում հաղթած ընկերության՝ «Գիմզա Բիլդինգ» ՍՊԸ-ի հետ 26.05.2023 կնքվել է պայմանագիր, որի արժեքն է 114 060 000 ՀՀ դրամ: Տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպությունն է՝ «Ստյոպշին» ՍՊԸ:

2024 թվականին հաստատված սուբվենցիոն ծրագրերի հայտեր

2024 թ. համար մարզի համայնքների կողմից մարզպետի աշխատակազմ է ներկայացվել **23 սուբվենցիոն հայտ** (**Եղեգնաձոր՝** 5 ծրագիր, **Ջերմուկ՝** 3 ծրագիր, **Վայք՝** 6 ծրագիր, **Արենի՝** 5 ծրագիր, **Եղեգիս՝** 4 ծրագիր)՝ **2 մլրդ 972 մլն ՀՀ դրամ** արժողությամբ, **որից կամ 43,8 %-ը համայնքների ներդրումն է, 1 մլրդ 669 մլն ՀՀ դրամը կամ 56,2 %-ը՝ սուբվենցիայի գումարն է:**

2023 թվականի դեկտեմբերի 6-ի դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 15 սուբվենցիայի ծրագրի ամբողջական փաթեթներ:

Ստորև ներկայացվում է ծրագրերի ցանկը՝ ըստ համայնքների՝

1. **Եղեգնաձոր համայնք- 3 ծրագիր՝**
   - «Եղեգնաձոր համայնքի նոր քաղաքային գերեզմանոցի կառուցում»
   - «Գլաձոր բնակավայրի ներհամայնքային փողոցների ասֆալտապատում»
   - Եղեգնաձոր բնակավայրի Վարդան Զորավար և Շահումյան փողոցների բարեկարգում և ասֆալտապատում»
2. **Ջերմուկ համայնք՝ 2 ծրագիր**
   - Ջերմուկ համայնքի «Կեչուտ գյուղի հանդիսությունների սրահի հիմնանորոգում, Կեչուտ գյուղի բակային տարածքի աստիճանների և հենապատի կառուցում, Գնդեվազ գյուղի գերեզմանատում տանող աստիճանների կառուցում»
   - «Գնդեվազ գյուղի ոռոգման ցանցի ընդլայնում»

3. **Վայք համայնք՝ 2 ծրագիր**
   - «Վայք համայնքի Սերս, Բարձրունի, Խնձորուտ և Նոր Ազնաբերդ բնակավայրերի փողոցների ասֆալտապատման աշխատանքներ»
   - «Վայք համայնքի Ազատեկ բնակավայրի խմելու ջրի ջրագծերի, գլխամասային կառույցների արտաքին և ներքին ցանցերի հիմնանորոգման աշխատանքներ»
4. **Արենի համայնք՝ 5 ծրագիր**
   - «Արենի բնակավայրում մեքենատրակտորային պարկի կառուցում»
   - «Ագարակաձոր բնակավայրում 500գծմ ոռոգման ներքին ցանցի կառուցում, Խաչիկ բնակավայրում 2,5 կմ արտաքին ցանցի կառուցում, Ռինդ բնակավայրում՝ «Ավշար» հանդամասում 300 գծմ, «Իշխանասար» հանդամասում 200գծմ արտաքին ցանցի կառուցման աշխատանքներ»
   - «Գնիշիկ բնակավայրում «Խազազի ձոր-Կարմիր քար» հանդամասում 1 կապտաժի և ջրագծի 1կմ հատվածի հիմնանորոգում, Խաչիկ բնակավայրում «40 աղբյուր» ջրաղբյուրի 3 կմ ջրագծի կառուցում, Չիվա բնակավայրում «Բարսեղի աղբյուր» ջրաղբյուրի ջրագծի հիմնանորոգում, Չիվա բնակավայրում կոյուղու մաքրման կայանի կառուցման աշխատանքներ»
   - «Ագարակաձոր բնակավայրում չլուսավորված 26 փողոցների լուսավորության համակարգերի կառուցում, Ելփին բնակավայրի 24 փողոցների արտաքին

լուսավորության ցանցի կառուցում, Չիվա բնակավայրում 22 փողոցների լուսավորման համակարգերի կառուցում»

- «Արենի բնակավայրում մանկապարտեզ տանող ճանապարհի կառուցում՝ սալարկմամբ»

5. **Եղեգիս համայնք՝ 3 ծրագիր**
   - «Եղեգիս համայնքի Թառաթումբ, Շատին, Արտաբույնք և Աղնջաձոր բնակավայրերում փողոցային լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ»
   - «Եղեգիս համայնքի Շատին, Քարագլուխ, Հերմոն և Աղնջաձոր բնակավայրերում խմելու ջրագծի, ՕԿՋ-ի կառուցման աշխատանքներ»
   - «Շատին, Քարագլուխ, Հորբատեղ, Հորս, Արտաբույնք, Թառաթումբ և Աղնջաձոր բնակավայրերի ոռոգման առուների վերանորոգման աշխատանքներ»

ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

- **2023 թվականին մարզում կատարված ցանքերը**

Ընդամենը ցանքեր 2903.9հա

որից՝ հացահատիկ և հատիկաընդեղեն - 1030.35հա, արտադրվել է 2042,7տ

բանջար բոստանային մշակաբույսեր - 233.65հա, արտադրվել է 3593,6տ

կարտոֆիլ - 86.3 հա, արտադրվել է 1097,1տ

կերային մշակաբույսեր - 1541.9 հա, արտադրվել է 20018տ

տեխնիկական մշակաբույսեր - 11.5 հա, արտադրվել է 24,8տ

խաղող - 1205,25 հա արտադրվել է 6155.0տ

պտուղ - 2561.5 հա արտադրվել է 5064.3տ

Արտադրված 6155 տոննա խաղողից մթերվել է 5385.1 տոննա (2022թ 4332 տոննա)

Կատարվել է 313 հա աշնանացան, որից 304 հեկտարը ցորեն, 9 հեկտարը գարի

- **Կառավարության** 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1313-L որոշմամբ հաստատված <<ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2022 թվականի պետական աջակցության>> ծրագրի շրջանակներում մարզի համայնքներում և բնակավայրերում 262 շահառու կատարել է 319.3 հա աշնանացան ցորենի ցանք, որից 125.7հա հավաստագրված սերմերով, 193.6 հա չհավաստագրված սերմերով, արտադրվել է մոտ 635 տոննա ցորեն: Կառավարության կողմից ծրագրի շրջանակներում սուբսիդավորվել է 28 638 524 դրամ:

Ծրագրով սահմանված կարգով վարչության մասնագետների կողմից իրականցվել է աշնանացան ցորենի 40.1 տոկոս ցանքատարածությունների ընտրանքային մոնիթորինգ, որի համար ծախսվել է 859 200 դրամ:

Վարչության կողմից տեղերում ուսումնասիրվել և գնահատվել է արտակարգ իրավիճակների հետևանքով բնակչությանը հասցված վնասները.

- **ցրտահարություն** - գրանցվել է Վայք համայնքի Գոմք, Արին, Զեդեա բնակավայրերի 35 հա պտղատու այգիներում, վնասի չափը կազմել է 56մլն դրամ:
- **Վարչության աշխատակիցների կողմից տարվա ընթացքում երկու անգամ մարզի բոլոր համայնքներում և բնակավայրերում բնակչության շրջանում իրականացվել են գյուղատնտեսության ոլորտում պետական օժանդակության ծրագրերի իրազեկման աշխատանքներ:**
- **ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տրամադրված գյուղատնտեսության ոլորտում պետական օժանդակության ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական թերթիկները, պաստառները բաշխվել են բոլոր համայնքներին և բնակավայրերին՝ ծրագրերի վերաբերյալ ազգաբնակչության շրջանում իրազեկվածությունը բարձրացվելու նպատակով:**
- **Կարկտահարությունն**- կարկտահարվել են Վայք համայնքի Հերհեր, Բարձրունի, Ջերմուկ համայնքի Գնդեվազ բնակավայրի հացահատիկային մշակաբույսերի,

պտղատու այգիների և բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ 114,7 հա, վնասի չափը կազմել է 232.148մլն. դրամ:

- Վայրի և գիշատիչ կենդանիների, մասնավորապես արջի կողմից մարզի համայնքներում և բնակավայրերում վնասի չափը կազմել է 10, 287 մլն. դրամի վնաս:
- **2024 թվականի** հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառված անասնագլխաքանակը.

Խոշոր եղջերավոր կենդանիներ - 14988 գլուխ
որից կովեր - 6031 գլուխ
մանր եղջերավոր կենդանիներ - 20 978գլուխ
խոզեր - 1762 գլուխ
մեղվաընտանիքներ - 22042 փեթակ
թռչուններ - 44422 թև

2023 թվականին ըստ օպերատիվ տվյալների արտադրվել է 5200 տոննա միս (2022թ
Համեմատ 2%), 22800 տոննա կաթ(2022թ համեմատ 0,9%),, 17,3 մլն հատ ձու(2022թ
համեմատ -4,4%), :

- **Վարչության** անմիջական վերահսկողությամբ անասնաբուժական ծառայությունների կողմից պետ. պատվերով իրականացված անասնաբուժական ախտորոշիչ և կանխարգելիչ միջոցառումների քանակը՝

1.բրուցելյոզ խ.ե.կ, 15194գ
2, բրուցելյոզ մ.ե.կ. 10820
3. լեյկոզ խ.ե.կ. 365գ
4.տուբերկուլինիզացիա 586գ
5. մաշկաբորբ խ.ե.կ 6866գ
6. սիբիրախտ խ.ե.կ 27532գ
7. սիբիրախտ ձիերի 707գ
8. Դաբաղ խ.ե.կ 48415գ
9. Դաբաղ SAT2 խ.ե.կ 39417
10. դաբաղ մ.ե.կ 17643գ
11. Դաբաղ SAT2 մ.ե.կ 15334գ
12. Էմկար խ.ե.կ 29965գ

2023 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ համարակալվել են 19799 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ՝ ծախսվել է 18 810 500 դրամ:

Ոռոգման սեզոնի մեկնարկից՝ <<Եղեգնաձոր>> ՋՕ-ի կողմից գյուղացիական տնտեսություններին տրամադրվել է 11.4 մլն մ^3 ոռոգման ջուր, հասույթը կազմել է 125.4 մլն դրամ, գանձվել է 132.0մլն դրամկամ 105տոկոս:

- Բույսերի պաշտպանության ծրագրով մարզին անվճար տրամադրված է 8,0լ «Բրոմեդ» և 4,8լ «Բրոմոցիդ-Ֆլյուիդ» մկնասպան թունանյութերը բաշխվել է մարզի Եղեգնաձոր, Արենի և Վայք համայնքներին՝ 160 հեկտար վարակված

վարելահողերի վրա կրծողների դեմ քիմիական պայքար կազմակերպելու համար՝ ծախսվել է :

-Գյուղատնտեսության ոլորտում պետական օժանդակության ծրագրեր

-Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 3-ի N 927-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ինտենսիվ այգեգործության զարգացման, արդիական տեխնոլոգիաների ներդրման և ոչ ավանդական բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանման պետական աջակցության 2021-2023 թվականների ծրագրի շրջանակում ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար, փոխհատուցման բաղադրիչով, 2023 թվականին քաղաքացիներից ստացվել է մասնակցության 1 դիմում: Ծրագրի շրջանակում թվով 1 շահառուի տրամադրվել է ընդհանուր 4,27 մլն դրամի չափով փոխհատուցում՝ 3,8 հա ընդհանուր մակերեսով հողատարածքում ոռոգման արդիական համակարգ ներդնելու համար:

- **ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում** 2023 թվականի հաստատվել է 16 հայտ 541,2 մլն դրամի չափով, կնքվել է 126 հումքի գնման պայմանագիր, իսկ սուբսիդավորման գումարը կազմել է 41,1 մլն դրամ:
- **ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 893-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների լիզինգի աջակցության ծրագրի շրջանակում** 2023 թվականին հաստատվել է 9 հայտ 71.9 մլն դրամի չափով, իսկ սուբսիդավորման գումարը կազմել **է 37,3 մլն** դրամ

  :
- **ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ի N 105-Լ որոշմամբ հաստատված տեխնիկայի լիզինգի աջակցության ծրագրի** շրջանակում 2023 թվականին ձեռք է բերվել 23 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, այդ թվում՝ 6 միավոր տրակտոր, լիզինգի գումարը կազմել է շուրջ 107.6 մլն ՀՀ դրամ, իսկ սուբսիդավորման գումարը՝ շուրջ 27.2 մլն ՀՀ դրամ:
- **ՀՀ կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 24-ի N 1485-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական**

համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագրի շրջանակում 2023 թվականին ապահովագրական ընկերությունների կողմից վաճառվել է 84 հատ ապահովագրության պայմանագիր՝ 74 հա ընդհանուր մակերեսով տարածքի համար: Ապահովագրական պատահարների հետևանքով 2023 թվականին՝ դեկտեմբերի 1-ի դրությամբ ապահովագրական ընկերությունների կողմից տրամադրվել է 12 ապահովագրական հատուցում՝ շուրջ **5.5 մլն** դրամի չափով:

- Վարչության պետի ամենօրյա ինտենսիվ աշխատանքի արդյունքում դեկտեմբերի 7-ից

վերագործարկվել է «Վայոց Ձոր- Մսամթերք» ՍՊԸ սպանդանոցը:

- Վարչության և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի

համագործության արդյունքում հիմնադրամը մարզում կատարել է 61 789 906 ՀՀ դրամի

ներդրում (արևային ֆոտովոլտային կայաններ 12 706 755 ՀՀ դրամ, 15 հատ էլ. հովիվ՝

17 912 294 դրամ, շին. նյութեր և հողային աշխատանքներ՝ 4 648 532 ՀՀ դրամ, LED

լուսավորություն 22 755 426 ՀՀ դրամ և այլն)

- Վարչության և Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) հայաստանյան մասնաճյուղի համագործության արդյունքում հիմնադրամը մարզում կատարել է 74 712 000 ՀՀ դրամի ներդրում (արևային ֆոտովոլտային կայան, էլ. հովիվ,

Հանդամիջյան ճանապարհների վերանորոգում, գյուղ տեխնիկա և այլն):

- «Բեզոար» բնապահպանական հիմնադրամի կողմից տարեկան 8 000 000 դրամ տրվում է

Արենի համայնքին՝ որպես վարձակալած տարածքի վարձավճար

Բնապահպանություն

1.Քննարկվել է <<Վայոց Ձոր Ֆրուկտ>> ՍՊ ընկերության Վայոց ձորի մարզի Գնիշիկի

քվարցիտների հանքավայրի արդյունահանման աշխատանքների <<Շրջակա միջավայրի

վրա ազդեցության նախնական գնահատման>> հայտը և տրվել դրական դիրքորոշում:

2.Քննարկվել է <<Երկրատարածական տեխնոլոգիաների կենտրոն>> ՍՊԸ-ի կողմից

ներկայացված <<Վայոց ձորի անտառտնտեսություն>> մասնաճյուղի 2023-2032թթ

կառավարման պլանի՝ շրջակա միջավայրի ազդեցության նախնական գնահատման հայտը և

տրվել դրական դիրքորոշում:

3. Քննարկվել է <<ՅՈՒԼԻ-ԴԱԼԻ>> ՍՊ ընկերության Վայոց ձորի մարզի Գնիշիկի

քվարցիտների հանքավայրի <<Փալի>> տեղամասում օգտակար հանածոյի

արդյունահանման աշխատանքների <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման>> հաշվետվությունը և տրվել դրական դիրքորոշում:

4. Քննարկվել է <<Արմստրոյ>> ՍՊԸ-ի կողմից Վայոց ձորի մարզի Արենի համայնքի

Տարսայիճի թաղամասի փողոցների ջրա-գազա և էլեկտրամատակարարման, կոյուղու

վերակառուցման <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման>>

հայտը և տրվել դրական դիրքորոշում:

5.Քննարկվել է <<ԿՎԱՐՑԻՏ>> ՍՊԸ-ի Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների

արդյունահանման աշխատանքների <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական

գնահատման>> հայտը և տրվել դրական դիրքորոշում:

6.Քննարկվել է <<Ռազմավարական էկոլոգիական գնահատման կարգի և ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը ներկայացվող պահանջները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման նախագիծը և տրվել

դրական դիրքորոշում:

7.<<Սևանա լճում 2023 թվականի նոյեմբերի 25-ից մինչև 2024 թվականի հունվարի 20-ը

ներառյալ>> մարզի համայնքներում (բնակավայրերում) սիգի ապօրինի վաճառքը արգելելու

նպատակով իրականացրել ենք վերահսկողություն և պարբերաբար կատարել ստուգայցեր:

8.Քննարկվել է <<Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> օրենքի նախագիծը և տրվել դրական դիրքորոշում:

9.Քննարկվել է Վայոց ձորի մարզի Արենի համայնքի կոշտ կենցաղային թափոնների աղբավայրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը և տրվել դրական դիրքորոշում:

10.Քննարկվել <<Մթնոլորտային օդն աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1673-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> Կառավարության որոշումների նախագծերի փաթեթը և տրվել է դրական դիրքորոշում:

11.Քննարկվել է <<ՄԵՆԴԻԱ ՌԵՍՈՒՐՍԻՍ>> ՍՊԸ-ի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Վարդենիսի բազմամետաղների հանքերևակման տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքը և տրվել է բացասական դիրքորոշում:

12.Քննարկվել է ««Հիդրոօդերևութաբանության և մանիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2024-2026 թվականների ընթացքում կատարման ենթակա պետական նշանակության հիդրոօդերևութաբանական աշխատանքների ծրագրիը հաստատելու մասին» Կառավարության որոշման նախագիծը և տրվել է դրական դիրքորոշում:

13.Քննարկվել է «Հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը և տրվել է դրական դիրքորոշում:

14.Քննարկվել է «ԿՎԱՐՑԻՏ» ՍՊԸ-ի Վայոց ձորի մարզի Գնիշիկի քվարցիտների արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը և տրվել է դրական դիրքորոշում:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1.2023թ բյուջեի կատարողականի մասին

«ՀՀ 2023թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով Վայոց ձորի մարզպետի աշխատակազմին 2023թ.-ի համար նախատեսվել են ծախսեր **3.959.970.6** հազ. դրամ գումար: Փաստացի ծախսը կազմել է 3.914.618.8 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել 98.9%-ով, որից

Ըստ ծրագրերի և միջոցառումների նախատեսվել և ֆինանսավորվել է...

1 . Ծրագիր 1051

ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կողմից տարածքային պետական կառավարում միջոցառում.
2023թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր **460376.1** հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 452738.5 հազ.դրամ:
Ֆինանսավորումը կատարվել է 98.3 %-ով:
Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելություններ միջոցառում
2023թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 447.5 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 447.5 հազ.դրամ /Ֆրանսիական պատվիրակության ընդունելություն/:
Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:
ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի տեխնիկական հագեցվածության բարելավում միջոցառում
2023թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել են պահպանման ծախսեր 9920.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 9044.22 հազ.դրամ: Տնտեսումը պայմանավորված է գնման ընթացակարգի արդյունքում առաջարկված և նախատեսված գների տարբերությամբ: Ձեռք է բերվել գրասենյակային ապրանք թվով 12 հատ և համակարգչային տեխնիկա՝ թվով 24 հատ:
Ֆինանսավորումը կատարվել է 91.2 %-ով:

2.ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պատվիրատվությամբ

Ծրագիր 1212:

Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին.
2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 57300.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել 57276.7 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով:

2023 թ-ի ընթացքում, միջոցառման շրջանակներում, Արենի և Վայք խոշորացված համայնքների 6 բնակավայրերում, էլեկտրաէներգիայի գումարների մասնակի փոխհատացումից օգտվել է 1196 /1234/ շահառու, անշարժ գույքի հարկ՝ 1260 /1279/ շահառու, ոռոգման ջուր՝ 450 շահառու:

ԼՂՀ-ից բռնի տեղահանվածներին և մարզերում բնակեցվածներին առաջին անհրաժեշտության պարենային և ոչ պարենային ապրանքների հրատապ ձեռքբերման, հյուրանոցային ծառայությունների ֆինանսավորման, ինչպես նաև այլ ծառայությունների փոխհատուցման աջակցություն:
2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 192700.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել 192061.8 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 99.7 %-ով: Միջոցառման շրջանակներում՝ հյուրանոցային ծառայությունների ձեռք բերում 170419.0 հազ.դրամ, պարենային, ոչ պարենային ապրանքների ձեռք բերում՝ 21642.8 հազ. դրամ:

Մարզերին սուբվենցիաների տրամադրում ենթակառուցվածքների զարգացման նպատակով.

2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 414450.9 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել 403832.8 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 97.44 %-ով:

Մարզերում առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծում միջոցառում:

2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 26856.4 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել 26856.4 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 100 %-ով /Ջերմուկ համայնքի ճոպանուղու վերանորոգում/:

Ծրագիր 1049

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության ծառայություններ միջոցառում.

Նախատեսվել է 162500.0 հազ. դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 162500.0 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով, ամառային պահպանության է ենթակվել 76 կմ ավտոճանապարհ, ձմեռային պահպանության է ենթակվել՝ 152 կմ ճանապարհ:

3. ՀՀ ԿԳՍՄ նախարարության պատվիրատվությամբ

Մշակույթի ոլորտ

Ըստ մշակույթի ոլորտի ծրագրերի 2023թ.-ի պետական բյուջեով ՀՀ Վայոց ձորի մարզի մշակույթի ոլորտի համար նախատեսվել է 23155.7 հազ.դրամ: Ֆինանսավորվել է 23155.7 հազ.դրամ: Ֆինանսավորվել է 100%-ով:

այդ թվում՝

Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ միջոցառում.

Ծրագիր 1075

Նախատեսվել է 17071.0 հազ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 17071.0 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 2845.7 հազ.դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե:

Համայնքի մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում.

Ծրագիր 1196

Նախատեսվել է 2964.7 հազ դրամ, փաստացի ֆինանսավորվել է 2964.7 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 494.0 հազ.դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե:

Մշակութային միջոցառումների իրականացում.

Ծրագիր 1196

Նախատեսվել է 3120.0 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 3120. հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ֆինանսավորված ԱԱՀ 520.0 հազ.դրամ գումարը վերադարձվել է պետական բյուջե: Իրականացվել է մարզային մշակութային 5 միջոցառում:

-Կրթություն

Ըստ կրթության ոլորտի ծրագրերի միջոցառումների իրականացման համար 2023թ պետական բյուջեով ՀՀ Վայոց ձորի մարզի կրթության ոլորտի համար նախատեսվել է 2524496.0 **հազ. դրամ, ֆինանսավորվել է 2505573.7 հազ. դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 99.3%-ով:**

-Հանրակրթական ուսուցման ծրագրեր 1146

Տարրական ընդհանուր կրթություն.

Միջոցառում 11001

2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 851054.3 հազ. դրամ, ֆինանսավորվել է 851038.6 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

Հիմնական ընդհանուր կրթություն.

Միջոցառում 11002

2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 1085621.0 հազ. դրամ, ֆինանսավորվել է 1070182.2 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 98.6%-ով: Չի ֆինանսավորվել Մոզրովի դպրոցի համար նախատեսված գումարը՝ դպրոցի կարգավիճակով պայմանավորված:

Միջնակարգ ընդհանուր կրթություն.

Միջոցառում 11003

2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 341438.1 հազ. դրամ, ֆինանսավորվել է 341438.1 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով:

Նախադպրոցական կրթություն

Միջոցառում 11013

2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 22127.8 հազ. դրամ, ֆինանսավորվել է 21108.5 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 95.4%-ով:

ՀՀ պետական հանրակրթական բոլոր ուսումնական հաստատություններում ԲՏՃՄ ոլորտի (բացառությամբ մաթեմատիկայի) դասավանդող ուսուցիչների համար վարձատրության բարձրացված հստակ չափաքանակի սահմանում:

Միջոցառում 12015

2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 14140.5 հազ. դրամ, ֆինանսավորվել է 14065.9 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 99.5%-ով, միջոցառման շահառուներ՝ ԲՏՃՄ առարկա դասավանդող 224 ուսուցիչներ:

ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում Միջոցառում 12016

2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 34490.6 հազ. դրամ, ֆինանսավորվել է 34490.6 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով: Շահառու են հանդիսացել ՀՀ Վայոց ձորի մարզի գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող 26 պետական հանրակրթական հաստատություններում մինչև 1 դրույք դասավանդող 210 ուսուցիչներ:

Սոցիալական որոշ խմբերի 1.5-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում

Միջոցառում 12013

2023թ.-ի պետական բյուջեով նախատեսվել է 37177.8 հազ. դրամ, ֆինանսավորվել է 37177.8 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով: Շահառու են հանդիսացել մարզի համայնքների նախադպրոցական հիմնարկների կրթության առանձնահատուկ կարիք ունեցող 30 և զինծառայող ծնողի 335 երեխաներ:

-Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների փոխհատուցում

Միջոցառում 12002

2023թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 25837.6 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 25303.4 հազ.դրամ: Ֆինանսավորումը կատարվել է 97.9 %-ով: Միջոցառման շահառու են հանդիսացել 232 մանկավարժ և 221 աշակերտ:

Արտադպրոցական դաստիարակություն

Միջոցառում 11001

2023թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 52462.3 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 52462.3 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%:

Ազգային, փողային և լարային նվագարանների գծով ուսուցում երաժշտական և արվեստի դպրոցներում.

Միջոցառում 11005

2023թ.-ի համար պետական բյուջեով նախատեսվել է 8497.5 հազ.դրամ, փաստացի ֆինանսավորվել է 8497.5 հազ դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով: Շահառու են հանդիսացել երաժշտական և արվեստի դպրոց հաճախող թվով 39 երեխա:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչների հավելավճարներ. Միջոցառում 12004

2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 4320.0 հազ.դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 3776.6 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 87.4%-ով:

Ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված ուսուցիչների որակի բարձրացմանը Միջոցառում 11010

2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 41184.5 հազ.դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 41184.5 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100%-ով: Ծրագրի շահառու են հադիսացել մարզի կամավոր ատեստավորված 83 ուսուցիչ:

Հանրակրթական հիմնական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների հերթական ատեստավորման ենթակա ուսուցչի և մանկավարժի վերապատրաստում

Միջոցառում 11022

2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 4944.0 հազ.դրամ; Փաստացի ֆինանսավորվել է 4847.7 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 98.05%-ով: Ծրագրի շահառու են հադիսացել ուսումնական հաստատությունների 168 ուսուցիչ և 41 մանկավարժ:

Դպրոցականների ամառային հանգստի կազմակերպում՝

Միջոցառում 11005

2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 1200.0 հազ.դրամ: Փաստացի ֆինանսավորվել է 1200.0 հազ.դրամ, ֆինանսավորումը կատարվել է 100.0%-ով:

4. ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության պատվիրատվությամբ

-Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում ծրագիր 1015.

Միջոցառում 12001

2023թ. պետական բյուջեով նախատեսվել է 87768.0 հազ. դրամ, փաստացի ֆինանսավորվել է 79931.6 հազ. դրամ, ֆինանսավորումը կատարվել է 91.1%-ով, թերի ֆինանսավորումը պայմանավորված է մարզային ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացված փաստացի հայտերի հետ: Ծրագրից օգտվել են 1110 շահառուներ:

II. ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ԲՅՈՒՋՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջներով ընդամենը տարեկան եկամուտներ են նախատեսվել 3 373 141.2 հազ. դրամ, տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտներից 2023 թվականի ընթացքում հավաքագրվել է 3 300 563.4 հազ. դրամ, կամ տեղական բյուջեներին ամրագրված ընդամենը եկամուտների հավաքագրումը կատարվել է 97.8%-ով, որից սեփական եկամուտներ՝ 2023 թվականի համար նախատեսվել է 1 264 112.4 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 1 343 412. 5 հազ. դրամ կամ կատարվել է 106.3%-ով, աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ կազմում է 22.0% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 242 072.8 հազ. դրամ:

Ամփոփելով գանձապետական համակարգի տվյալները, 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզի 5 համայնքների տեղական բյուջներով նախատեսվել է.

- **Անշարժ գույքի հարկ**՝ 2023 թվականի համար պլանավորվել է հավաքագրել 141 788.8 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 155 924.2 հազ.դրամ կամ կատարվել է 110.0%-ով, նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 26.6% կամ ավել հավաքագրվել է 32 791.2 հազ. դրամ:
- **Գույքահարկ փոխադրամիջոցներից**՝ տարեկան պլանավորվել է հավաքագրել 319 132.2 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 359 856.8 հազ. դրամ, կատարվել է 112.8%-ով, նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 20.3% կամ ավել հավաքագրվել է 60 675.0 հազ. դրամ:
- **Տեղական տուրքեր**՝ 29 313.2 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 32 847.1 հազ.դրամ, կատարվել է 112.1%-ով:

- **Գույքի /հողի/ վարձակալություն՝** 416 733.8 հազ. դրամ, փաստացի հավաքագրվել է 441 160.7 հազ. դրամ, կատարվել է 105.9%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 18.3% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 68 364.1 հազ. դրամ:
- **Տեղական վճարներ՝** նախատեսվել է 214 284.0 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել 200 917.1 հազ. դրամ, կատարվել է 93.8%-ով: Այդ թվում՝
- **Աղբահանության վճար՝** նախատեսվել է 77 202.1 հազ.դրամ, փաստացի հավաքագրվել է 68 560.5 հազ.դրամ կամ կատարվել է 88.8%-ով: Աճը նախորդ տարվա համեմատ կազմում է 20.1% կամ ավել հավաքագրված գումարը կազմում է 11460.2 հազ. դրամ:

Համահարթեցման կարգով ՀՀ 2023թ-ի համար պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 1 519 832.9 հազ. դրամ դոտացիա, որն ամբողջությամբ ֆինանսավորվել է:

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ, ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ և ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1. 2023 թվականի աշխատանքային ծրագրի վերլուծություն, 2024 թվականի աշխատանքային ծրագրի կազմում, կիսամյակային գնահատված կատարողականների հավաքագրում և արդյունքների ամփոփում.

Հավաքագրվել է քաղաքացիական ծառայողների 2023 թվականի առաջին կիսամյակի կատարողականների արդյունքները, ամփոփվել և ներկայացվել է ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժին:

Մարզպետի աշխատակազմի 2023 թվականի առաջին և երկրորդ կիսամյակի կատարողականների արդյունքները սահմանված ժամկետում ամփոփվել և համապատասխան ձևաչափով ներկայացվել է վարչապետի աշխատակազմ:

2023 թվականի հոկտեմբեր ամսին քաղաքացիական ծառայողների կողմից կազմվել է 2024 թվականի իրականացվելիք աշխատանքային ծրագրերը՝ համադրելով կառավարության ռազմավարական ծրագրի կետերի հետ և 2024 թվականի աշխատանքային ծրագրում ստորաբաժանումների կողմից ներառվել են այն ծրագրերը, որտեղ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմը համակատարող է: 2024 թվականի աշխատանքային ծրագիրը նախնական քննարկումից հետո ներկայացվել է ՀՀ վարչապետին:

2. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների տնօրենների և անձնակազմի աշխատակիցների անձնական գործերի վարում, տեղեկատվության տրամադրում և ՔԾ տեղեկատվական հարթակի վարում:

Թարմացվել են մարզպետի աշխատակազմի ենթակայության տակ գտնվող ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների տնօրենների, մարզպետի աշխատակազմի անձնակազմի աշխատակիցների անձնական գործերը, համապատասխան փոփոխությունները ներառվել են: Քաղաքացիական ծառայության օրենսդրությամբ պահանջվող տեղեկատվությունը սահմանված ժամկետում տրամադրվել է վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակ:

Յուրաքանչյուր ամսվա ավարտին տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն տեղեկատվություն է տրամադրվել Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի և մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպությունների թափուր աշխատատեղերի վերաբերյալ:

Իրականացվել է մարզպետի աշխատակազմի կառուցվածքային փոփոխության գործընթացը: Քաղաքացիական ծառայության գրասենյակ է ներկայացրել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատված օրինակները և քաղաքացիական ծառայության պաշտոնների անվանացանկում փոփոխություններ կատարելու մասին առաջարկությունը, անվանացանկի, քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի նախագծերը, հիմնավորումը:

Վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի համաձայնությունը ստանալուց հետո հաստատվել է անվանացանկը և պաշտոնների անձնագրերը: Կատարվել են վերանշանակումներ նոր ստեղծված քաղաքացիական ծառայության պաշտոններում և համապատասխան փոփոխություններ փոփոխության ենթարկված ստորաբաժանումներում:

Իրականացվել է մարզպետի աշխատակազմի հաստիքացուցակի կազմման աշխատանքները, կատարվել է նոր ստեղծված պաշտոնների վարձատրության հետ կապված փոփոխությունները, ներկայացվել է որոշումների նախագծերը:

Վերահսկվել է անցակետի կառավարման՝ հաճախումների հետ կապված ծրագիրը, կատարվել է ամենօրյա մշտադիտարկում՝ աշխատակիցների աշխատանքային ժամերի հաշվառում և յուրաքանչյուր ամսվան հաջորդող աշխատանքային օրը ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժին է ներկայացվել նախորդ ամսվա հաճախացուցակը:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի որոշումների, գլխավոր քարտուղարի հրամանների, պաշտոնի անձնագրերի, պայմանագրերի և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկում/ պատրաստում.

Մարզպետի կողմից ընդունվել է 317 որոշում, գլխավոր քարտուղարի կողմից արձակվել է 499 հրաման, կնքվել է 27 աշխատանքային պայմանագիր:

Մարզպետի կողմից ընդունված որոշումների հաշվառումը իրականացվել է փաստաթղթաշրջանառության բաժնում, որի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվել են տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

4. Մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական, մշակութային կազմակերպությունների տնօրենների և մարզպետի աշխատակազմի քաղաքացիական

ծառայության թափուր պաշտոնների մրցույթների նախապատրաստական աշխատանքների իրականացում.

5. Հայտարարվել է քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնի համալրման համար 11 մրցույթ, համալրվել է 5 քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն, չի կայացել 5 մրցույթ /դիմորդ չլինելու կամ պահանջներին չբավարարելու արդյունքում, չի համալրվել 2 քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն:

Հայտարարվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության **«Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» և** «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» **պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենի** թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 9 մրցույթ: Համալրվել է **«Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի** թափուր պաշտոնը:

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարվել և հրապարակվել է 12 հանրակրթական ուսումնական հաստատությունների գործադիր տնօրենների թափուր տեղի հայտարարություն: Հայտարարվել և հրապարակվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների 23, որից համալրվել է 2 թափուր պաշտոն և վարչատնտեսական մասի համակարգողների 34 մրցույթ,որից համալրվել է 8 թափուր պաշտոն և չի համալրվել 4 թափուր պաշտոն:Իրականացվել է հավակնորդների գործերի ընդունման, իրավական ակտերի, նախագծերի նախապատրաստման և ստորագրման ներկայացման աշխատանքները:

6. Վերապատրաստումների, գործուղումների գործընթացի կազմակերպում և իրականացում.

2022 թվականի աշխատանքային ծրագրի կատարողականների կիսամյակային միջին արդյունքների հիման վրա հաստատվել է Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2023 թվականի վերապատրաստման ծրագիրը: Պարտադիր վերապատրաստման են ենթակա 3/երեք/ քաղաքացիական ծառայողներ: Հաշվետու ժամանակահատվածում վերապատրաստվել են 14 քաղաքացիական ծառայողներ / քաղաքացիական ծառայողների առկա թվի 30 տոկոսի պահանջը հաշվի առնելով/: Մասնագիտական գիտելիքների վերապատրաստումն իրականացրել է Հայաստանի պետական համալսարանը / 3 թեմա/, իսկ կոմպետենցիաների /7 թեմա/ ուղղությամբ քաղաքացիական ծառայության գրասենյակը:

7. Մարզպետի աշխատակազմի բարեվարքության համակարգի աշխատանքների համակարգում.

Աշխատանքի ընդունված հայեցողական և քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցրած անձանց վերաբերյալ պահանջվել է դատվածության բացակայության մասին տեղեկանք, միաժամանակ նրանց կողմից լրացվել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի պահանջի համաձայն ՁԼ3-ը:

Մարզպետի աշխատակազմում բարեվարքության համակարգի հետ կապված խախտումներ չեն արձանագրվել:

Աջակցություն է ցուցաբերվել հայտարարատու պաշտոնատար անձանց պաշտոնի ստանձման,պաշտոնի դադարեցման և տարեկան հ2023 թվականի հայտարարագրերը լրացնելիս:

8. Մարզպետի աշխատակազմի էլեկտրոնային համակարգում օգտագործվող ծրագրային խնդիրների ապահովման և նրանց օգտագործման աշխատանքների կազմակերպման աջակցություն: Համակարգչային ցանցի, օպերացիոն համակարգերի, հարակից օգնող ծրագրերի, հակավիրուսային խնդիրների և հատուկ ծրագրային ապահովման խնդիրների լուծում և համակարգում:

Այս գործառույթի շրջանակներում հիմնական գործունեությունը կազմակերպել և իրականացրել է վարչության գլխավոր ցանցային ադմինիստրատորը: Կիսամյակի կտրվածքով ծրագրային ապահովման և օգտագործման, համակարգչային ցանցի, օպերացիոն համակարգերի, հարակից օգնող, հակավիրուսային և հատուկ ծրագրային ապահովման խնդիրներ չեն առաջացել: Ներդրված բոլոր ծրագրերը գործել են անխափան, ժամանակին վերացվել են առաջացած թերությունները, նորոգվել են սարքավորումները: Ապահովել է առցանց բոլոր վեբինարների և քաղաքացիական ծառայողների վերապատրաստման գործընթացները: Իրականացվել է Մարզպետի աշխատակազմի նոր կառուցվածքին համապատասխան անհրաժեշտ բոլոր գործընթացները փաստաթղթաշրջանառության համակարգում:

9. Գնման գործընթացի իրականացում և համապատասխան ընթացակարգերի ապահովում:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի 2023թ-ի գնումների պլանի համապատասխան կազմվել է տեխնիկական բնութագիր ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների համար: Կնքվել են պայմանագրեր մատակարար կազմակերպությունների հետ, ձեռք են բերվել ապրանքներ և ծառայություններ, կազմվել են համապատասխան արձանագրություններ: Մարզպետի աշխատակազմի գնման պլանով նախատեսված գնման գործընթացները իրականացվել են համապատասխան ընթացակարգերով և խնդիրներ չեն արձանագրվել: Անխափան ռեժիմով ապահովել են աշխատակիցները աշխատանքի համար անհրաժեշտ նյութերով և սարքավորումներով:

10. Մարզպետի աշխատակազմի գործունեության հրապարակայնության ու աշխատանքների լուսաբանման ապահովում:Մարզպետի աշխատակազմի գործունեությանը առնչվող պարտադիր հրապարակման տեղեկությունների հրապարակման ապահովում.

Մարզպետի կողմից հրավիրվող խորհրդակցությունների, մարզխորհրդի նիստերի նախապատրաստման և արձանագրման, արարողակարգային և այլ միջոցառումների տեխնիկական և ներկայացուցչական մասի կազմակերպչական աշխատանքների ապահովում.

Վարչության աշխատանքների մյուս ուղղությունը հասարակայնության հետ կապերի, մարզպետի աշխատակազմի գործունեության հրապարակայնության , թափանցիկության, լուսաբանման աշխատանքների ապահովումն է, պաշտոնական կայքի և Ֆբէջի աշխատանքների կազմակերպումը:

Հաշվետու ժամանակաշրջանում կայքի <<Նորություններ>> բաժնում հրապարակվել է շուրջ 250 նորություն, ուղերձ, տեղեկատվություն համայնքների ավագանիների նիստերի, մարզխորհրդի նիստերի, համայնքային նշանակության հողամասերի վարձակալության կամ վաճառքի վերաբերյալ և այլն:

Լուսաբանական նյութերն արտացոլել են ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գործունեության հիմնական ուղղությունները, կարևոր իրադարձությունները, մարզային և հանրապետական նշանակության հանդիպումները, միջազգային կառույցների ներկայացուցիչների, ՀՀ-ում տարբեր պետությունների դեսպանների՝ մարզ կատարած այցերը, մարզի համայնքներին և մարզային ենթակայության հաստատություններին առնչվող տարաբնույթ իրադարձություններ:

Օպերատիվ լուսաբանվել են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց առնչվող իրադարձությունները, Վայքի հաշվառման կայանի աշխատանքները, պետական աջակցության ծրագրերը, կարիքների վերհանմանն ու գնահատմանն ուղղված աշխատանքները և այլն:

Կայքի տարբեր բաժինները և ենթաբաժինները մշտապես համալրվել են պարտադիր /նաև նախընտրելի/ հրապարակման ենթակա տեղեկատվությամբ:

Հրապարակվել են <<Իրավական ակտեր>> բաժնում մարզպետի որոշումները, <<Հայտարարություններ/Թափուր հաստիքներ>> բաժնում՝ հայտարարություններ թափուր աշխատատեղերի մասին, այլ հայտարարություններ, պաշտոնի նշանակումների հրամաններ,դպրոցի տնօրենի թափուր տեղի հավակնորդների զարգացման ծրագրերը և այլն:

<<Քաղաքացիների ընդունելություն>> բաժնում յուրաքանչյուր ամիս, այնուհետև յուրաքանչյուր եռամսյակ տեղադրվել է համապատասխան տեղեկատվությունը քաղաքացիների ընդունելության, ներկայացրած դիմումների և արդյունքների մասին:

<<Համայնքեր>> բաժնում յուրաքանչյուր ամիս տեղադրվել է համայնքների բյուջետային եկամուտների, յուաքանչյուր եռամսյակ՝ բյուջետային ծախսերի մասին պահանջվող տեղակատվությունը, ինչպես նաև համայնքներում մասնագիտական-իրավական հսկողության արդյունքները:Տեղադրվել են բնակավայրերի վարչական ղեկավարների տվյալները:

Կադրային փոփոխություններով պայմանավորված՝ կատարվել են համապատասխան փոփոխություններ <<Մարզպետի աշխատակազմ>> բաժնում, այլ ենթաբաժիններում:

Սահմանված կարգով և ժամկետներում պատասխանվել է Մալբրի համակարգով և պաշտոնական էլեկտրոնային հասցեներով ստացված գրություններին, պատշաճ կերպով կատարվել տրված հանձնարարականները:

Ակտիվ գործել են Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի և մարզպետի ՖԲ էջերը՝ ապահովելով աշխատակազմի գործունեության թափանցիկությունը, հրապարակայնությունը, հաշվետվողականությունը:

Պատասխանվել են քաղաքացիներից, լրագրողներից, այլ կառույցներից ստացված հարցումներին՝ պահպանելով համապատասխան կարգի դրույթները:

Կատարվել են ընթացիկ այլ աշխատանքները, որոնք բխել են աշխատանքային պարտականություններից:

Հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել է մարզխորհրդի 4 նիստ, որի նախապատրաստական, ընթացիկ աշխատանքները կատարվել են՝ համաձայն կարգի:

Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել են հանդիպումներ լրագրողների հետ, հարցազրույցներ են տվել ըստ անհրաժեշտության մարզպետը, վարչության պետերը, այլ պատասխանատուներ:

Օրվա լրահոսի՝ մարզին առնչվող կարևոր իրադարձությունները ներկայացվել են Վայոց ձորի մարզպետին, կատարվել համապատասխան հետևություններ:

11. Մարզպետի և գլխավոր քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերով, աշխատանքային և գործակարգավորական խորհրդակցություններում տրված հանձնարարականների կատարման վերահսկողության ապահովում:

Ստորաբաժանման կողմից իրականացվել է մարզպետի և գլխավոր քարտուղարի կողմից ընդունված իրավական ակտերով, աշխատանքային և գործակարգավորական խորհրդակցություններում տրված բոլոր հանձնարարականների կատարման վերահսկողություն և ապահովվել է դրանց կատարումը ժամկետին և պատշաճ որակով:

12. Էլեկտրոնային և թղթային փաստաթղթաշրջանառության կազմակերպում և իրականացում:

Հաշվետու ժամանակաշրջանում ստորաբաժանման փաստաթղթաշրջանառության բաժնում իրականացվել է ընդամենը 33530 փաստաթղթաշրջանառություն, որից՝ 11799 մտից, 9048 ելից, 12683 ներքին:

Մալբրի համակարգում չներառված մյուս բոլոր գործառույթներն, այդ թվում թղթային փաստաթղթաշրջանառությունն իրականացվել է առանց թերացումների և ուշացումներ չեն արձանագրվել:

13. ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի և պետական մարմինների հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում**:**

ՀՀ կառավարության, ՀՀ վարչապետի և պետական մարմինների հանձնարարականների կատարման նկատմամբ ստորաբաժանման կողմից սահմանվել և իրականացվել է առաձնակի վերահսկողություն: Վերահսկվել է մարզպետի աշխատակազմի մյուս բոլոր ստորաբաժանումների կողմից այդ հանձնարարականների ժամանակին և պատշաճ կատարումը, ուշացումներ և թերացումներ չեն արձանագրվել: Ստորաբաժանման կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվող բոլոր ամսական և կիսամյակային հաշվետվությունները տրվել են ժամանակին:

14. Շենքի, շինությունների, ապրանքանյութական արժեքների պահպանություն, լուսավորության, ջրամատակարարման, հեռախոսակապի, սանհանգույցների հետ կապված աշխատանքներ:

Սահմանված կարգով իրականացվել են մարզպետի աշխատակազմի շենքի, շինությունների, ապրանքանյութական արժեքների պահպանություն, լուսավորության, ջրամատակարարման, հեռախոսակապի, սանհանգույցների հետ կապված աշխատանքները:

Մշտապես իրականացվել է մարզպետի աշխատակազմի ծառայողական մեքենաների շահագործման, սպասարկման և պահպանման աշխատանքները:

15. Քաղաքացիների դիմում-բողոքների քննարկում և քաղաքացիների ընդունելության կազմակերպում:

Ստորաբաժանման կողմից ամենօրյա ռեժիմով կազմակերպվել է մարզպետի աշխատակազմ դիմած քաղաքացիների ընդունելություն և սպասարկում, ցուցաբերվել է համապատասխան ուղղորդում կամ օժանդակություն:

2023թվականի ընթացքում ստացվել է 748 դիմում, որից՝

1) Դրամական օգնություն է խնդրել 585 քաղաքացի: 548 քաղաքացու խնդրանք բավարարվել է, 37-ինը՝ մերժվել է:
2) Բնակարանային և քաղաքաշինական հարցերով դիմել է 15 քաղաքացի, որից 15 դիմումներին ատասխանվել են:
3) Առողջապահական բնույթի 17 դիմում է ստացվել , ստացված 17 դիմումները բավարարվել են:
4) Աշխատանքի հարցերով դիմել է 40 քաղաքացի, ստացված բոլոր դիմումներին տրվել է դրական ընթացք:
5) Գյուղատնտեսական հարցերով դիմել է 24 քաղաքացի, 24-ին տրվել է դրական պատասխան:
6) Կրթության և նախադպրոցական ուսումնական հաստատություններին առնչվող հարցերով դիմել է 10 քաղաքացի և ստացել են դրական պատասխան:
7) Հողաշինության հարցերով դիմած քաղաքացիներից 11-ին էլ տրվել է դրական պատասխան:
8) Որդեգրման, մանկատնից երեխային վերադարձնելու և ներառական կրթության վկայագիր տրամադրելու հարցերով դիմել է 33 քաղաքացի և ստացել դրական պատասխան:
9) Ստացվել է այլ բնույթի 13 դիմում:

" լրագրողներից՝ 9
" ուսանողներից՝ 3
" ՀՀ քաղաքացիներից՝ 4
" Պետական մարմիններից՝ 4

Բազմաթիվ բանավոր հարցումներ են արվել մարզպետի աշխատակազմի տարբեր ստորաբաժանումներին, որոնց պատասխանները տրվել են նույն պահին կամ եղել են հարցի պատասխանը ստանալու համար այլ հասցեով դիմելու ուղղորդումներ:

Մարզպետի աշխատակազմ դիմած քաղաքացիների դիմում-բողոքների վերաբերյալ 2023 թվականի վերաբերյալ հաշվետվությունները տեղադրվել են մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքէջում:

Սահմանված կարգով և առանց ժամկերտների խախտմամբ պատասխանվել է Mulberry համակարգով ստացված բոլոր գրություններին և պատշաճորեն կատարվել են համակարգով ստացված հանձնարարականների պահանջները:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

❖ **ՀՀ** Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժինը հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ապահովել է ՀՀ օրենսդրությամբ Մարզպետին և Գլխավոր քարտուղարին վերապահված լիազորությունների օրինականությունը, ուսումնասիրվել է մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմված՝ Մարզպետի և Գլխավոր քարտուղարի ընդունած իրավական ակտերի՝ որոշումների և հրամանների նախագծերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

❖ Բաժնի կողմից ուսումնասիրվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերի օրինականությունը և ծագած խնդիրների լուծման վերաբերյալ Մարզպետի համապատասխան գրություններ են ուղարկվել համայնքների ղեկավարներին:

❖ Նշված ժամանակահատվածում մարզի ավագանիների կողմից ընդունվել է 699 որոշում, որոնք հիմնականում վերաբերվել են համայնքների բյուջեների հաստատմանը, դրանց կատարման եռամսյակային հաղորդումներին, կատարված փոփոխություններին և հոդվածային վերաբաշխումներին, համայնքապետարանի աշխատակազմի թվաքանակի, հաստիքացուցակի և դրույքաչափերի հաստատմանը, համայնքային սեփականություն հանդիսացող գույքի օտարմանը և օգտագործման տրամադրմանը, հողամասերի նպատակային նշանակության փոփոխությանը, համայնքի կամավոր խնդիրների լուծմանը և ներհամայնքային այլ խնդիրների: Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքների ղեկավարների կողմից ընդունվել է 2181 որոշում, որոնք հիմնականում վերաբերվել են համայնքային սեփականություն հանդիսացող գույքի

օտարման կամ օգտագործման տրամադրմանը՝ հիմք ընդունելով համայնքի ավագանու համապատասխան որոշումները, հողերի կամ շինությունների գործառնական նշանակության փոփոխությանը, անշարժ գույն առանձին միավոր ճանաչելուն և դրանց հասցեավորմանը, համապատասխան կարգերի հաստատմանը, հանձնաժողովների ստեղծմանը և այլ հարցերի:

Անհամապատասխանությունների և թերությունների հայտնաբերման դեպքում որոշումները վերադարձվել են ուղղումների, դրանք սահմանված կարգով և ժամկետներում ուղղվել և վերադարձվել են մարզպետի աշխատակազմ:

❖ Ուսումնասիրվել են քաղաքացիների դիմումները, բողոքները և առաջարկությունները, ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ և ներկայացվել են խնդիրների լուծման վերաբերյալ առաջարկություններ, տրվել է իրավաբանական խորհրդատվություն: Հաշվետու ժամանակահատվածում պատասխանվել է մարզի տարբեր համայնքների բնակիչների 44 դիմումի, որոնցում բարձրացված հարցերը հիմանկանում վերաբերվել են անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման հետ կապված, աշխատանքային փոխհարաբերությունների ընթացքում առաջացած վեճերի, հողային սահմանների ճշգրտման, սեփականության իրավունքի, գույքին պատճառված վնասի, ապահովագրության վերաբերյալ և բազմաբնույթ այլ խնդիրների: Դիմումներին պատասխանվել է ՀՀ օրենսդրույթյան պահանջներից ելնելով, մի մասին տրվել է հարցերը լուծող սպառիչ պատասխան, իսկ մարզպետի աշխատակազմի իրավասության շրջանակից դուրս գտնվող հարցերի վերաբերյալ դիմումատուներին բացատրվել է գործող կարգը և ուղղորդվել են համապատասխան ոլորտներ:

❖ Իրականացվել է քաղաքացիների և պաշտոնատար անձանց ընդունելություն, տրամադրվել անհրաժեշտ իրավաբանական խորհրդատվություն և համապատասխան տեղեկատվություն՝ ինչպես քաղաքացիների, այնպես էլ մարզպետի աշխատակազմի ենթակայության կազմակերպությունների ղեկավարների, աշխատակիցների և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների: Համայնքապետարանների աշխատակազմերի քարտուղարներին ամենօրյա աշխատանքային կարգով տրամադրվել է խորհրդատվություն, մեթոդական ցուցումներ, իրականացվել է փոխհամագործակցություն:

❖ Ուսումնասիրվել են Բաժնին մակագրված նամակները, գրությունները, հանձնարարականները և օրենքով սահմանված ժամկետում ապահովվել է դրանց լուծումը: Հաշվետու ժամանակահատվածում Բաժինը ստացել է 728 մտից, 6610 ներքին գրություն, պատասխանվել է 686 գրության և պատրաստվել է 121 ելից գրություն: Հանձնարարականներին պատասխանելու համար սահմանված ժամկետների խախտումներ չեն գրանցվել:

❖ Պատրաստվել են Բաժնի գործունեությանն առնչվող գրություններ, զեկուցագրեր, հաշվետվություններ, տեղեկատվություն, եզրակացություններ և ներկայացվել համապատասխան մարմիններին:

❖ Ուսումնասիրվել են մակագրված իրավական ակտերի նախագծերը, որոշ դեպքերում ներկայացվել են առաջարկություններ՝ դրանցում ներառելու համար:

❖ Դատական ատյաններում իրականացրել եմ մարզպետի աշխատակազմի շահերի պաշտպանությունը:

❖ Ամենամսյա հաշվետվություն է ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն՝ մարզի համայնքների ավագանիների կողմից ընդունված որոշումների վերաբերյալ:

❖ Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված իրավական ակտերը տեղադրվել են մարզպետի աշխատակազմի պաշտոնական կայքում:

❖ Պատասխանվել են տարբեր պետական մարմինների, փաստաբանների, լրագրողների և այլ կազմակերպությունների կողմից ուղարկված գրություններին, հարցումներին: